

ՊԵՐՐԻ ԿԱՐԾՐ ԿԵՑՈՒԱԾԲ ԿԸ ԴՐՍԵՒՈՐԷ ԴԵՍՊՈՒՆ ՊԵԹԸԼԻ ՅԵՏ ԻՐ ՏԵՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պերրի երկն ընդունեց Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսթոն Պեթըլը, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային հարցեր:

Հանդիպումին մթնոլորտը եղած է «փոթորկալի» շարժարկի պիտի Պերրիի արտասանած ճառին պատճառով: Պերրի խստի քննադատած էր Ուաշինգթոնի քաղաքականութիւնը Լիբանանի հանդէպ, յատկապէս Լիբանան - Իսրայէլ ջորի տագնապին գծով:

Պերրի երկն վերահաստատեց իր այս կէցւածքը Պեթըլի հետ հանդիպումին ընթացքին եւ աւելցուց, որ Մ. Նահանգներ կողմնակալութիւն կ'ընեն եւ ոչ մէկ ձեռնարկ չ'ունեն քանակաւ Իսրայէլի վրայ:

Պեթըլ Պերրիի հետ հանդիպումը նկատեց շատ կարեւոր եւ յայտնեց, որ Ուաշինգթոն պատրաստ է օժանդակելու հարաւային Լիբանանի բարգաւաճման ծրագիրներու գործադրութեան:

ՆԱԽԱՐԱՐԱՑ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԸՆԹԱՑԻԿ ՆԻՍ

Կառավարութիւնը, նախագահութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի, երկն Թանգարանի շրջանի իր կեդրոնատեղիին մէջ գումարեց իր ընթացիկ նիստը, որմէ բացակայեցան փոխ վարչապետ Իսամ Ֆարէս եւ նախարարներ Ժան Լուի Քըրտահի, Սլէյման Ֆրենժիէ եւ Թալալ Արսլան:



Երկու ժամուան նիստին ընթացքին քննարկուեցաւ 47 կէտերէ բաղկացած օրակարգ մը, որմէ ետք տեղեկատուութեան նախարար Միշէլ Աբմահա կատարեց յայտարարութիւններ:

Կառավարութիւնը որոշած է Պալատէք -

Ներմէյի շրջանին մէջ բանակի ծառայութիւնը վեց ամիսով երկարաձգել:

Նիստին ընթացքին ոչ մէկ «փշոտ» հարց քննարկուած է եւ ընդհանուր առմամբ տիրած է հանդարտ մթնոլորտ:

ԱՒՍՏՐԻՈՅ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՉ



Ներքին գործոց նախարար Էլիաս Մըր երկն ժողով մը գումարեց աստիճանի իր պաշտօնակիցին՝ Արնէթ Շթրաուսըրի հետ: Ներկայ գտնուեցան նաեւ Շթրաուսըրի ընկերակցող աստիճանի բարձրաստիճան պաշտօնատարներու պատուիրակութիւնը, ինչպէս նաեւ լիբանանցի քիմիոսական բարձրաստիճան անձնատրութիւններ:

Ժողովէն ետք Մըր եւ Շթրաուսըր կնքեցին համաձայնագիր մը երկու երկիրներուն միջեւ սպահովական հարցերու կամ միջոցառումներու շուրջ գործակցութեան նպատակով: Համաձայնագիրի կնքումէն ետք Մըր եւ Շթրաուսըր փոխանակեցին յուշանուէրներ, ապա տունին մամլոյ միացեալ ասուլիս մը:

Շթրաուսըր դրուատեց Մըրի կողմէ ի գործ դրուած ջանքերը՝ կարճ ժամանակաշրջանի մը ընթացքին գործադրած ըլլալով սպահովական նուաճումներ:

Մըր իր կարգին նշեց, որ Լիբանանի եւ Աւստրիայի ներքին գործոց նախարարութիւնները պիտի գործակցին պայքարելու թմրեցուցիչի մաքսանենգութեան, դրամի յուսցումին, կանխամտածուած ռմբակոծութեանց եւ միջազգային ահաբեկչութեան դէմ:

ԽԱՍՏԱՍ ՊԷՅՐՈՒԹ ԺԱՄԱՆԵՅ

Սուրիոյ փոխ նախագահ Ապտէլ Հալիմ Խատամ երկն ժամանեց Լիբանան՝ բժշկական քննութիւններու ենթարկուելու համար:

Երկն գիշեր, վարչապետ Ռաֆիք Հարիրի Քորաթէի մէջ սարքեց ընթրիք մը ի պատիւ Խատամի եւ անոր կնոջ:

ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԵՒ ԾԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲԸ ՎԱԻԵՐԱՑՈՒՑ ԵՐԵՔ ՕՐԻՆԱԳԻԾԵՐ

Տնտեսութեան եւ ճարտարարուեստի խորհրդարանական յանձնախումբը, նախագահութեամբ երեսփոխան Պասէլ Յիլիանի երկն գումարեց ժողով մը, որուն ընթացքին վաւերացուց երեք օրինագիծեր: Անոնք են. Երոպական Դրամատան հետ լիբանանեան հանրապետութեան համաձայնագիրը նորոգել՝ ապահովելու համար ներդրումներ ճարտարարուեստի մարկի յատուկ, Իտալիոյ եւ Լիբանանի միջեւ բարգաւաճման ծիրէն ներս գործակցութեան համաձայնագիրի նորոգում, ինչպէս նաեւ Լիբանան - Յորդանան ապա առևտուրի գոտիի ստեղծում:

«ՆԻՈՒ. ԹԻ. ՎԻ.»Ի ԴԷՄ ՄԻՔԱԹԻԻ ԲԱՑԱԾ ԴԱՏԸ ՓԱԿՈՒԵՑԱԻ

Վճարեկ ատենաի ընդհանուր դատախաչ Ռաֆիկ Օմէյշ Քատտուրա երկն փակեց հանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեմիպ Միքաթիի կողմէ պատկերասփիւռի «Նիու. Թի. Վի.» կայանին դէմ բացուած դատը:

Քատտուրա երկն դատավարութեան ընթացքին լսեց «Նիու. Թի. Վի.» տնօրէն եւ սեփականատէր Թահսին Խայյաթի, ընդհանուր տնօրէն Համուի Շաուքի եւ «Թրանս Մայէդ» ընկերութեան պատասխանատու Իմատ Մայէդի յայտարարութիւնները, որոնց հիման վրայ որոշեց Շաուքը ապառ արձակել, իսկ Խայյաթն ու Մայէդը ապառ արձակել՝ երկիրէն չ'հեռանալու պայմանով, ցնոր վճիռ:

Քատտուրա յայտնեց նաեւ, որ դատավարութեանց արդիւնքները եւ անոնց մասին իր տեղեկագիրը պիտի փոխանցէ ընդհանուր դատախաչ Ատնան Ատումի:

ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ ԼԻԿԱՅԻ ԺՈՂՈՎ

Մարոնիներու Լիկայի Խորհուրդը նախագահութեամբ Հարէս Շեհապի երկն գումարեց ժողով մը, որուն ընթացքին դիտել տուաւ, որ հարկ է ձեռնարկ ու մշակել ընտրական օրէնքի յատուկ ծրագիր մը, ինչպէս նաեւ որոշել վարչական ապակեդրոնացման յատուկ օրինագիծ մը:

Խորհուրդը դրուատեց արտաքին գործոց նախարարութեան մէջ դիւանագիտական նշանակումները:

ՍՈՒՐԻՈՅ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԵՆԷՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՉ

Սուրիոյ ընկերային ապահովագրութեան ընդհանուր հաստատութեան պատուիրակութիւն մը երկն այցելեց Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկի կեդրոնատեղիին, որ հանդիպում մը ունեցաւ ընդհանուր տնօրէն Մոհամէտ Քարաքիի հետ:

Հանդիպումին քննարկուեցան փոխ գործակցութեան կապուած հարցեր:

Որոշուեցաւ նաեւ կապ մել լիբանանեւտրիական յատուկ պատուիրակութիւն մը, որ պիտի այցելէ արաբական երկիրներ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՄԲ ՅԱՅԱՍՏԱՆ ...

Ծարուակուած Ա. էջէն

րութիւնները տակաւին հեռու են այն մակարդակէն, որ կը համապատասխանէ հայ եւ վրացի ժողովուրդներուն միջեւ դարձուած ընթացքին ձեւադրուած պատմական կապերուն: Մարգարեան եւ Չափարիճէ ընդգծեցին հայ-վրացական տնտեսական միացեալ ծրագիրներու մշակումը եւ կիրարկումը: Վարչապետ Մարգարեան ողջունելով տնտեսական կապերու վարգացման անհրաժեշտութեան վրացական կողմին պատրաստակամութիւնը, շեշտեց յատկապէս փոխադրամիջոցներու եւ ուժանիթի մարքեթին ներս գործակցութեան անհրաժեշտութիւնը: Մարգարեան վերահաստատեց Չափարիճի վարգացման ծրագիրին Հայաստանի մաս-

նակցութեան պատրաստակամութիւնը: Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արթուր Պաղտանարեան երկն ընդունեց Թիոզ Չափարիճէն: Հանդիպումին մասնակցեցաւ նաեւ Հայաստանի մէջ Վրաստանի դեսպան Նիկոլոյ Նիկոլոյոզ-Վիլի: Քննարկուեցան շրջանի քաղաքական եւ տնտեսական վար-

«ԵՐԿԻՐ» 30ՒՆԻՍ 11 - 30ՒՆԻՍ 17 ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ Պատուհանը բաց են արել... էջ 1 Առաջարկին համարժեք պահանջարկ... էջ 6 Ո՛չ պահում են, ոչ էլ սեփականաշնորհում... էջ 8 Հայկական երգեր թուրքերի կատարմամբ... էջ 14

galerie PIERROT Specialiste de Meubles D'enfants de 0 à 20 ans. Includes images of children's furniture and contact information: Autostrade Jal-el-Dib - Tel : 04 / 713233 - 03 / 701607

BALTAYAN ELECTRONIC. Includes images of various electronic devices like a camera, mobile phone, and a hair dryer. Contact info: Ս. մասնաճիւղ Պուրճ Հանուր, Արմենիա պողոտայի հին. : 01 / 262901

galerie PIERROT Liste de Naissance et de Bâpteme Autostrade Jal-el-Dib - Tel : 04 / 713233 - 03 / 701607

ՎՐԻՊԱԿ Մեր երկնուան թիւին Ա. էջով տրուած «Միացեալ Նահանգներու անկախութեան տօնը» խորագիրով լուրին մէջ պէտք է կարդալ. «Միացեալ Նահանգներու անկախութեան տօնին առթիւ Պիլի մէջ տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն մը...»:

ԱՂԲԱԼԵԱՆ ԿՈՄՔԵԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲ ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԲԱՆԵՐԻ 106ՐԴ ԱՍԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ԴԱՇՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ «Քար Պաշա» ճաշարան, Ֆէյթրուն, Կիրակի 20 Յուլիս, կէսօրուան ժամը 12:00էն սկսեալ: Տեղերը ապահովելու համար դիմել Աղբալեան Հ. Մ. Ը. Մ. մարգամշակութային կեդրոն:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ» «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ» ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ ՀԱՒԱՔՈՂ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ «Վանայ Զայն» կարիքը ունի ծանուցումներ հաւաքող ներկայանալի երիտասարդուհիներու եւ երիտասարդներու, որոնք պիտի աշխատին շահաբաժնի դրութեամբ: Հայերէնի կողքին ֆրանսերէն կամ անգլերէն եւ արաբերէն գիտնալը պայման է: Կը խնդրուի անձամբ ներկայանալ «Վանայ Զայն»:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Դատաստանական Խորհուրդի գրասենեակի ամառային շրջանի ժամանակացոյցը 15 - 7 - 2003 մինչեւ 30 - 9 - 2003 Երկուշաբթի ժամը 8:30 - 12:00 Գործընթացի ժամը 8:30 - 12:00 Հինգշաբթի ժամը 8:30 - 12:00 Ծաբաթ ժամը 8:30 - 12:00 ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԸԱՄԱՃԻԱՐԸԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Հինգշաբթի, 10 Յուլիս 2003ի առաւօտուն, Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոս Պրաքայայի վանքին մէջ ընդունեց այցելութիւնը Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի յատուկ պատուիրակ ղեկավար Ժորժ Յեթսիսի:

Գոկոս Յեթսիս Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի կողմէ պաշտօնական այցելութեան մը ձեռնարկած է Միջին Արեւելք, հանդիպումներ ունենալու եկեղեցիներու հոգեւոր պետերուն հետ: Սոյն հանդիպումներուն նպատակն է եկեղեցիներու պատասխանատուններուն հետ խորհրդակցել շրջանէն ներս հաստատուելիք Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի գրասենեակի առնչուած հարցերու մասին: Յայտնենք, որ երկար տարիներէ ի վեր խորհուրդի ժընտի կեդրոնատեղիին մէջ հաստատուած էին վանապան երկրամասերու հար-

ցերով պարզող յատուկ գրասենեակներ: Վեհափառ հայրապետին նախագահութեամբ գումարած Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Գործադիր Վարչութիւնը որոշած է յիշեալ գրասենեակները ժընտի փոխադրել տուեալ երկրամասերը, որպէսզի անոնք կարենան աւելի մօտէն հետեւիլ եկեղեցիներու կեանքին ու կարիքներուն եւ կամուրջի դերը կատարել եկեղեցիներու եւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի միջեւ:

Միջին Արեւելք իր շրջապտոյտին սկսելէ առաջ, գոկոս Յեթսիս շխատանքային երկար հանդիպում մը ունեցաւ վեհափառ հայրապետին հետ: Վեհափառը անհրաժեշտ թելադրութիւնները կատարեց յիշեալ գրասենեակի վայրին, ներքին կառոյցին ու առաքելութեան կապած հարցերու գծով:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ «ԵՌԵԱԿ»Ը ...


Ճարուակուած Ա. Էջեմ

յայտարարեց, որ «Եւրոպական Միութիւնը մեծ դեր կրնայ խաղալ հայ-թրքական յարաբերութիւններու բարելաման մէջ»:

«Հայ-թրքական յարաբերութիւններու ծիրէն ներս Հայաստանի իշխանութիւնները կ'ողջունեն Հայաստանի մէջ ՕԹՍՆԻ ռազմափորձերուն Թուրքիոյ մասնակցութիւնը եւ երկու երկիրներու արտաքին գործոց նախարարներու Մատրիտի հանդիպումը, որ, տեղեակ են, դրական կը գնահատուի Թուրքիոյ կողմէ», յայտնեց Օսկանեան: Ան դիտել տուաւ, թէ անցեալ Յունիսի Մատրիտի մէջ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլիլի հետ հանդիպումին ընթացքին համաձայնութիւն գոյացած է վարել «փոքր քայլերու» քաղաքականութիւն մը: «Եթէ Անգարայի դիրքորոշումը չփոխուի, յառաջիկայ քանի մը ամիսներուն ընթացքին պարզացում կ'արձանագրուի որոշ հարցերու մէջ», դիտել տուած է Վարդան Օսկանեան, աւելցնելով, որ Թուրքիոյ կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչումը նախապայման չէ հայ-թրքական յարաբերութիւններու բնականոնացման համար: «Անկախ այն իրողութենէն, թէ Թուրքիա կը ճանչնայ Հայկական Յեղասպանութիւնը թէ ոչ, մենք պարտաւոր ենք անոր հետ հաստատելու բնական՝ բարի դրացիական յարաբերութիւններ, ներառեալ դիւանագիտական յարաբերութիւններ», նշեց Վարդան Օսկանեան:

Ինչ կը վերաբերի Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծման, Օսկանեան նկատել տուաւ, թէ հայկական կողմը յատուկ շեշտ կը դնէ Լեռնային Ղարաբաղի նպագայ քաղաքական կարգավիճակին վրայ: Ան կասկած չայտնած է Արարիկի արտաքին գործոց նախարարին այն յայտարարութեան գծով, ըստ որուն, Պաքո պարտաւոր է բնակեցնելու Լեռնային Ղարաբաղի ղեկավարութեան հետ, եթէ Երեւան քաղաքին բնակեցնելու գործընթացն է:

«ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ մէջ Եւրոպական Միութեան նորանշանակ յատուկ ներկայացուցիչ Հայկէ Տալիթի երէկ Երեւանի մէջ յայտարարեց, թէ ինք ուղղակիօրէն պիտի չմասնակցի Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գործընթացին: Ֆիւլախտացի դիւանագետը նշեց, որ անհրաժեշտութեան պարագային պիտի աջակցի ԵԱՀԿ Մինսքի խմբակին: Նշենք, որ Հայկէ Տալիթի 1995էն 1996 կը վարել Լեռնային Ղարաբաղի տագնապին գծով Մինսքի համագումարի համանախագահի պաշտօնը:



Երէկուան տեղական մամուլը հիմնականօրէն անդրադարձած է Ապպասի հրաժարականին եւ աներկեան կողմի միջամտութեան, իրաքեան պատերազմին շուրջ տարածուած լուրերուն եւ փաստաթուղթերուն կեղծուած ըլլալուն, իրաքցի նախկին պատասխանատուներու եւ անձնատուրութիւններու ձերբակալութեան:

Տեղական լուրերու կարգին թերթերը շեշտը դրած են նախագահ Լահուտի Ուքրանիա, պապ Ֆրանսուա կատարած ճամբորդութեան, ինչպէս նաեւ երկրին ներքին կեանքը յուշող վանական հարցերու վրայ:

Իրաքեան իրադարձութիւններուն մասին «Սաֆիր» նշած է, թէ Ռամսֆելտ կրկին Սուրիան անբաստանեց Իրաքի հարցերուն միջամտիս ըլլալու յանցանքով: Ան կը յայտնէ, թէ Իրաքի վրայ եղած յարձակումին պատճառը հաւաքական քանդումի վէճերը չէին: Ռաշինկ-թըն յայտարարած է, թէ իր հարցը կը կայանայ շատ յաջող պատերազմ մղելուն մէջ, նշած է օրաթերթը:

«Նահար» օրաթերթը գրած է, թէ Սպիտակ Տունը հաստատեց Իրաքի կողմէ իւրահիմն գնահատուող փաստաթուղթերուն կեղծ ըլլալը: Ըստ թերթին, Ռամսֆելտ յայտարարեց, որ դաշնակից ուժերը Իրաքի մէջ աշխուժ քայլերու չդիմեցին վէճերու մասին եղած լուրերուն անհաստատ ըլլալուն պատճառով:

Թերթին համաձայն, աներկեան վիճակագրութեան մը համաձայն, իրաքեան պատերազմին քիմիկատներուն թիւր կը հասնի 6-7 հազարի: «Անուար»-ի համաձայն, Իրաքի մանուկները իսկական դուրս են «մեծ»երու պատերազմին, որովհետեւ անոնց մօտ լայն տարածում գտած է թմրեցուցիչ գործածութիւնը եւ անոնք կը գտնուին անպատրաստ կերպով վիճակի մէջ:

Թերթը նշած է, թէ դաշնակից ուժերը Իրաքի մէջ կը ձերբակալեն նախկին սպաներ, զօրավարներ եւ քաղաքական անձնատուրութիւններ: Ըստ ամերիկացի պատասխանատուներուն, իրաքի մէջ պատերազմը տակաւին ընթացքի մէջ է, իսկ իրաքցիները կը փորձեն վրէժ լուծել եւ սպաննել ամերիկացի զինուորները: Իրաքցի հնազանդի մը համաձայն, Պաղատի Թանգարանէն գողցուած հնութիւնները այժմ կը գտնուին ամերիկացիներուն, ճափոնցիներուն եւ իւրաքացիներուն մօտ, դիտել տուած է «Անուար»:

Ըստ «Տիար»-ի, Պուշ յայտարարած է, թէ Միացեալ Նահանգները ձեռնարկեցին Իրաքի դէմ իրաքեան արձակուրդները չեն պաղտեցնելու տարաբարները: Ուքրանիա կատարած այցելութեան մասին «Սաֆիր» գրած է, թէ Ռաշինկ-թըն եւ Գահիս-րէ կը միջամտեն Ապու Մադինի կործանումը կասեցնելու համար, իսկ Եասին կը յայտարարէ, թէ պիտի չհանդուրձէ եղած խախտումները:

Իւրաքի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանը նշած է, թէ Ապու Մադինի կը խախտուի անոր անձնական իրաւունքները: «Քիֆահ Արապի» նշած է, թէ Ռաշինկ-թըն Ապպասը կ'որակէ «տկար մարդ», որ քիչ մը «բարեկամութեամբ» ամերիկեան ճնշումներուն պատճառով:

Ըստ «Նահար»-ի, Ապպաս կառչած կը մնայ իրաքական տարածքներէ իր որոշումին եւ Միացեալ Նահանգներէն 20 միլիոն տոլարի նիւթական զօրակցութիւն կը ստանայ:

«Լիուս» դիտել տուած է, թէ Ապու Մադինի կը խօսի Ֆաթի մէջ եղած անհամաձայնութիւններուն մասին, իսկ Շարուն կը շարունակէ իր բռնաբարքներն ու սեպտեմբերին յայտարարեց: Ռաշինկ-թըն Ապպասի նշեցուցիչ կը կանգնի գերիներու կարգով եւ անմիջական օժանկութիւն կը պատուիրակութիւն մը կը դրկէ շրջան համաձայնութեան հաստատման եւ գործողութիւններու կասեցման առնչութեամբ աշխատանքներ տանելու:

Տեղական լուրերու կարգին «Նահար» գրած է, թէ վարչապետ Հարիրի Գամալնուս կատարած այցելութեան եւ Սուրիոյ պատասխանատուներուն հետ ունեցած հանդիպումէն ետք յայտնեց, թէ Սուրիոյ հետ յարաբերութիւնները շատ առողջ եւ անուր են:

«Սաֆիր»-ի համաձայն, նախագահ Լահուտ արտաքին Միջին Արեւելքի մէջ պատերազմը տակաւին ընթացքի մէջ է, իսկ իրաքցիները կը փորձեն վրէժ լուծել եւ սպաննել ամերիկացի զինուորները: Իրաքցի հնազանդի մը համաձայն, Պաղատի Թանգարանէն գողցուած հնութիւնները այժմ կը գտնուին ամերիկացիներուն, ճափոնցիներուն եւ իւրաքացիներուն մօտ, դիտել տուած է «Անուար»:

Ըստ «Տիար»-ի, Պուշ յայտարարած է, թէ Միացեալ Նահանգները ձեռնարկեցին Իրաքի դէմ իրաքեան արձակուրդները չեն պաղտեցնելու տարաբարները: Ուքրանիա կատարած այցելութեան մասին «Սաֆիր» գրած է, թէ Ռաշինկ-թըն եւ Գահիս-րէ կը միջամտեն Ապու Մադինի կործանումը կասեցնելու համար, իսկ Եասին կը յայտարարէ, թէ պիտի չհանդուրձէ եղած խախտումները:

ԹՈՒՐԲԻԱ ՄԻՇՏ ԶՕՐԱՎԿԻԳ՝ ԱԶՐՊՅԵՃԱՆԻ «ԱՐԴԱՐ» ԴԱՏԵՐՈՒՆ

Վերջերս «Անատոլու» լրատու գործակալութիւնը հաղորդեց, թէ Պաքո կատարած իր պաշտօնական այցելութեան ընթացքին Թուրքիոյ արդարութեան նախարար Ճեմիլ Չիչէք յայտնած է, որ Թուրքիա միշտ նեցուկ կանգնած է Արարիկի «արդար» դատերուն:

Արարիկի Ազգային Ժողովի նախագահ Մուրթուպ Ալեակերովի հետ իր հանդիպումին ընթացքին Չիչէք շեշտած է, որ Թուրքիա մեծ կարեւորութիւն կու տայ Արարիկի հետ իր յարաբերութիւններուն: Լեռնային Ղարաբաղի հարցին առնչութեամբ Չիչէք ըստ է «Կ'ուզենք, որ հարցը խաղաղ միջոցներով լուծուի, եւ այս իմաստով նեցուկ կը կանգնինք Արարիկի»:

Ալեակերով կը կարգին նշած է, թէ Արարիկի ճանաչումը կ'ուզենք իր կողմէ միջոցներով «ապտագրել» Հայաստանի կողմէ «բռնազարուած» տարածքները, սակայն, եթէ նման լուծում չգտնուի, Արարիկի ժողովուրդն ու իշխանութիւնները պատրաստ են «այլ միջոցներ» ու դիմելու: Միւս կողմէ, սակայն, ան կը հաստատէ, որ խաղաղ լուծման միջոցներ տակաւին չեն սպառած:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● ԱՄՄԱՆ.- Յորդանանի գաղտնի սպասարկութեան նախկին ղեկավարը՝ Սամի Պաթիխի ութ տարի բանտարկութեան դատապարտուեցաւ Կեղծարարութեան յանցանքի համար:

● ԼՈՆՏՈՆ.- Աշխարհահռչակ գեղանկարիչ Ռամսֆելտի փետուրին պատկանող 300 ամենայ գործ մը՝ նկարիչին դիմանկարը, որ պահուած էր այլ գծազրուեան մը տակ, ծախուեցաւ 11,2 միլիոն տոլարի Լոնտոնի Սոթսիք աճուրդի տան կողմէ:

● ՓԱՍՓԼՈՆԱ.- Սպանիոյ Փամփունա քաղաքի ցուլերու արշաւի փառասօսին 13 հոգի վիրատուած է այս շաբթուան ընթացքին:

● ՊԵՅՃԻԿ.- Չինաստանը հարուածող անձրեւներու պատճառով ռոզոլումները ցարդ 298 Կոնի խլած են եւ աւելի քան 100 միլիոն հոգի անպատուար ձգած:

Advertisement for Orient Plus featuring Farna and prices \$190 and \$425. Includes contact info: 01.900598, 901598, 03.258336, 256254, www.orientplus.com

ԴԱՍԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԳՈՀԱՐՆԵՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»ԷՆ

Այսուհետեւ ամեն Ուրբաթ կ'եստը ետք ժամը 4:30ի լուրերն անմիջապէս ետք, «Վանայ Զայն»-էն կ'ընթացնուի ռեկլամային յայտարարութեան գոհարները:

Table with 2 columns: Service/Item and Price/Details. Includes items like 'Հապրակամ', 'Կիներու «Երեւան» երգչախումբ', 'Անուար', 'Այս Սիրտս Նորից', 'Շոյ Նագան', 'Լեզվիմկա', 'Վաղարշապատի պար', 'Ամալի Տակից', 'Գոլթերոց', 'Բարձր Սարեր', 'Նանօր'.

Advertisement for AFHIL medical equipment. Features a wheelchair image and lists services: RENT AND SALE, AT HOME (Wheelchair, Walker, Electric Bed, Manual Bed, Water Mattress, Cans, Sticks, Serum Tripod, Walking Frame), HOME MEDICAL EQUIPMENT SERVICES. Contact: 390-350000, «Արև» ՍԵՆՏԵՐ, ԳՐԱՆԵՆԵԱԿ՝ ԱՅՇԻԼ, ԱՅԵՏԻ ԶԵՆԵ, Բ. ՅԱՐԱ (ՇԵՆ. (01) 242556/7. Slogan: NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

Advertisement for «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ» Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ. Lists broadcast schedule: 8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն, 8:45 «Աստղեր», 10:05 «Լուսարձակ», 11:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն, 3:00 HIT PARADE, 4:40 Դասական կտորներու ձայնագրում, 5:30 «Just spice of Armenian jazz», 7:00 «Ուզմիկ», 7:00 «Ուզմիկ» խորագիրներու ընթերցում:

ԹՈՒՐՔԻՈՅ ՆԵՐԹԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

ԸՆԿՐՈՒՄԻ ԱՉԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՓՈՒՆ ՆԱԽԱԳԱԸ ԵՒ Ը. Յ. Դ. ԲԻՐՈՅԻ ԱՆԴԱՍ
ԸՆԿ. ՎԱԿԱՆ ՅՈՎԱՆՆԻՍԵԱՆԻ ԸՏՏ

ՀԱՐՑՈՒՄ. - Վերջին շրջանին Թուրքիոյ կողմէ կատարուեցան յայտարարութիւններ Հայաստանի հետ յարաբերութիւնները բարելաւելու պատրաստակամութեան վերաբերեալ: Այնուհետեւ դիրքորոշումը դարձեալ կարծաքայ: Արդեօ՞ք Անգարա ասով կը փորձէ ցոյց տալ Միացեալ Նահանգներուն եւ Եւրոպական Միութեան, թէ ինք պատրաստ է ընդառաջելու անոնց պահանջին եւ բաճախ մահմանները, սակայն հայերը հանդէս կու գան անհանդուրժող կեցուածքով:

ՊԱՏԱՍԽԱՆ. - Թրքական դիւանագիտութեան գործունէութիւնը վերջին շրջանին իսկապէս շատ բանով պայմանաւորուած է Միացեալ Նահանգներու եւ Եւրոպական Միութեան կողմէ գործադրուող զօրաւոր ճնշումով, որովհետեւ կրկնակի չափանիշներու քաղաքականութիւնը որոշարժեղ մէջ բոլորին յոգնեցուցած է: Եթէ Հայաստանէն կամ ԱՊՀի այլ երկիրներէն խստագոյն կը պահանջուի պահել խաղին եւրոպական կանոնները՝ ժողովրդավարութեան, ազգային փոքրամասնութիւններուն հետ կապուած հարցերու եւ այլ հարցերու մէջ, ապա բնական է, որ այդ «ուղտերը» շարան-շարան կը չոքին նաեւ Թուրքիոյ դրան առջեւ:

Միեւնոյն ժամանակ պէտք է ընդգծել, որ Հայաստանի հետ յարաբերութիւններու բարելաւման

պահանջը առաջին հերթին յառաջ կը մղուի Թուրքիոյ բարեկամ արեւմտեան քաղաքական շրջանակներուն կողմէ: Որովհետեւ առանց Թուրքիոյ կողմէ որոշակի զիջումներու, անոնք այլեւս չեն կրնար պաշտպանել թրքական շահերը Եւրոպական խորհուրդի, Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան կամ Քոնկրէսի մէջ: Բայց Թուրքիա անգամ մը եւս կը խաղայ՝ ստեղծելով դիրքորոշումի փոփոխութեան նմանակում, իրականութեան մէջ առանց տեղէն քայլ մը առջեւ երթալու: Անոնց կեցուածքին ձեւակերպման մեղմացումը եւ անգամ մը եւս կարծաքայուցումը ցոյց տուին, որ Անգարա իրականութեան մէջ պատրաստ չէ որեւէ զիջումի:

Հ. - Այսուհանդերձ, այսօր Հայաստանին որքան ձեռնարկ է Թուրքիոյ հետ սահմանից բացումը: Արդեօք այդ մէկը այս պահուստում կեցուածքով կրնա իրականացուիլ:

Պ. - Մեր հասարակութիւնը պէտք է գիտակցի, որ Թուրքիոյ հետ երկաթուղիի բացումը Հայաստանի համար տնտեսական կարգաբերութիւններու եւ առաջնահերթութիւն չէ այսօր: Այդ մէկը իսկապէս կրնար լուրջ նշանակութիւն ունենալ, եթէ թրքական երկաթուղիին զուգահեռ բացուի նաեւ Ազըրպէյճանէն անցնող երկաթուղիի եւ Աբխազիոյ գիծը: Այդ պարագային Հայ-

աստան իսկապէս պիտի գառնար չըջանի կարեւոր եւ տարանջիկ երկիրներէն մէկը, որովհետեւ պիտի յայտնուէր Եւրոպայ-Կովկաս-Միջին Ասիա-Չինաստան, Եւրոպա-Կովկաս-Ռուսիա, Ռուսիա-Իրան-Արարական աշխարհ երկաթուղային փոխադրուած թիւններու կեդրոնին մէջ: Այդ պարագային կարելի էր էական եկամուտներ ակնկալել տարանջիկ փոխադրութիւններէն:

Եթէ միայն թրքական երկաթուղին բացուի, այդ մէկը լուրջ հեռանկար չի խոստանար: Մենք այսօր բաւականաչափ ներքին պահանջներ ունինք, որոնց ճիշդ օգտագործումը աւելի մեծ ազդեցութիւն պիտի ունենայ Հայաստանի տնտեսական վիճակին բարելաւման վրայ: Այդ մէկը փաստութեան ղէմ կարծր պայքար մղելու անհրաժեշտութիւնն է, մեր դիւանագիտութիւնը աւելի արդիւնաւէտ դարձնելը, հարկային դաշտի բարելաւումը: Միեւնոյն ժամանակ այս պաշարներուն առկայութիւնը կ'ընդունին նաեւ արտասահմանի մեր գործընկերները: Թրքական երկաթուղիին բացումը ապագային կրնայ յանգիլ նաեւ անցանկալի երեւոյթներուն:

Հ. - Ի՞նչ նկատի ունիք:

Պ. - Եթէ միայն այդ երկաթուղին բացուի, Հայաստանը, ըստ էության, կը կցուի Թուրքիոյ արեւելեան շուկային: Ի՞նչ կը նշանակէ ասիկա:

Առաջին՝ Թուրքիոյ արեւելեան շրջանը, գործնական իրաւամբ կ'անուանենք պատմական գարգացած է: Անցեալ տասնամեակներուն ընթացքին այստեղ ենթակառուցվածքները, ներքին թումները ներգրաւելու Թուրքիոյ բոլոր փորձերը ձախողած են: Ոչ ոք մեծ գործառնութիւններ կը սկսի հայկական տարածքներուն մէջ՝ հաշուի առնելով, որ այդ մէկը այնուամենայնիւ Թուրքիոյ հողը չէ: Միեւնոյն ժամանակ եւ Թուրք, եւ արտասահմանցի գործարարներ այդ տարածքին մէջ իրենք գիրենք ապահով չեն գտար, ոչ միայն Հայկական Յեղասպանութեան հարցին, այլ նաեւ՝ քրտական հարցի առկայութեան պատճառով:

Հիմա, եթէ մենք բանաք սահմանը, արդէն իսկ կարելիութիւն կու տանք Թուրքիոյ աշխուժացնելու սահմանային առեւտուրը, նաեւ՝ զօրացնել իրեն պետութիւնը իր ներկայութիւնը այդ տարածքներուն մէջ, ինչ որ չէ յաջողած անցնող տասնամեակներուն՝ քրտական շարունակական դիմադրութեան պայմաններուն մէջ: Արդեօք ասիկա կը բխի մեր շահերէն:

Երկրորդ՝ սահմանին բացումը Հայաստանին տնտեսական վնաս կրնայ հասցնել ապագային: Այսօր մեր գիւղատնտեսութիւնը նոր ոտքի կը կանգնի, բայց արդէն իսկ կու տայ մաքուր եւ որակաւոր արտադրութիւն: Այս պատճառով ալ այն քիչ մը աւելի սուղ է, քան թրքական մասնաւոր թրքական աժան սնունդը Հայաստան յեռուի, մեր գիւղացիներն ու գիւղատնտեսական արտադրութեան վերամշակումով գրադող գործարարները պիտի չդիմանան այդ մրցակցութեան: Հայաստան Առեւտուրի Համաշխարհային կազմակերպութեան անդամ է, պիտի կարենա՞նք մենք այդ իրողութեան պայմաններուն մէջ մեր գիւղացիներուն եւ սնունդի արդիւնաբերողներուն շահերը պաշտպանել:

Չէ՞ որ մեր քով բնակչութեան մեծ մասը ընկերային դժուար պայմաններուն մէջ է: Այդ պատճառով մարդիկ սովորաբար կրնա խորտակուի աժան ապրանք, այնպէս, ինչպէս այսօր կը գնեն չինական կամ նոյն թրքական հագուստները, որ իր որակով քանի մը անգամով կը գինի եւրոպականին, բայց աւելի մատչելի է: Այս իրողութիւններէն մեկնելով՝ կարծեմ, որ սահմանի բացման ենթադրեալ առաւելու ինքնուրու առաւելին գործարարներու թերեւս չըջանի մէջ եկամուտներ ապահովեն, բայց հետագային կրնան ունենալ բացասական հետեւանքներ:

Հ. - Կը հետեւցուի, որ սահմանի բացումը աւելի շատ ձեռնարկ է Թուրքիոյ: Բայց այդ պարագային անոնք ինչո՞ւ ցախապայման կը դնեն, որ Հայաստան հրաժարի Յեղասպանութեան պատճառով հետապնդուող մեզ:

Պ. - Բանն ալ ճիշդ այդ է: Չի բաւեր, որ իրենք աւելի պիտի շահին սահմանի բացումէն, ատոր գուգահեռ ալ մէջտեղ կը նետեն քաղաքական պահանջներ: Մենք, ըստ էութեան, կը գտնուինք անհասարակ պայմաններու մէջ:

Հ. - Անգարայի սկզբնական մեղմ յայտարարութիւններէն ոգեւորուած՝ որոշ սփիւռքահայ կազմակերպութիւններ Միացեալ Նահանգներու մէջ հանդիպեցան Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչին եւ խորհրդարանի պատուիրակութեան հետ: Միայն Հ. Յ. Դաշնակցութիւնը հանդիպեցաւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչին եւ խորհրդարանի պատուիրակութեան հետ: Միայն Հ. Յ. Դաշնակցութիւնը հանդիպեցաւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչին եւ խորհրդարանի պատուիրակութեան հետ: Ըստ մեզի, ինչո՞ւ Սփիւռքի որոշ կառույցներ կ'լլեցին Թուրքիոյ մատուցած խաչով:

Պ. - Թրքական դիւանագիտութիւնը միշտ ճկուն եղած է եւ պէտք է ընդունի, որ այս անգամ որոշ չափով Թուրքիոյ յաջողեցան ճարպիկ քայլ մը առնել: Մէկ կողմէ յայտարարելով, թէ շահագրգիռ են Հայաստանի հետ երկկողմանի յարաբերութիւններու, միւս կողմէ ալ տպաւորութիւնը միշտ ճկուն այդ յարաբերութիւնները խոչընդոտող հիմնական գործօնը Հայկական Սփիւռքն է: Միեւնոյն ժամանակ փորձել նաեւ պատուիրակութեան անդամները Սփիւռքի հայկական կազմակերպութիւններուն միջև:

Բայց ասիկա նոր մարտավարութիւն մը չէ: Առաջին քայլերը այսպէս կոչուած «Հայ - Թրքական Հաշտութեան Յանձնաժողով»-ի ձեւակերպման ուղղութեամբ կը միտնին ատոր եւ իրաւացի մտահոգութիւնը յառաջացուցին նաեւ Հայաստանի մէջ: Ես իսկապէս շատ կը ցաւեմ, որ տասնամեակներու դառն փորձէն ետք մեր ժողովուրդին մէջ տակաւին կը գտնուին անհատներ ու կազմակերպութիւններ, որոնք պարբերաբար կը յայտնուին Թուրքիոյ նախապատրաստած ծուղակին մէջ:

Սակայն կ'ոգտնեն նաեւ ընդգծել, որ Թուրքիոյ յաջողութիւնները այս իմաստով այնքան ալ մեծ չեն: Անոնք կրցան հանդիպումներու ներքաշել ման հետապնդուող մեզ:



բազմաթիւ հայկական կազմակերպութիւններէն քանի մը հատը միայն: Կազմակերպութիւններ, որոնք իրական ազդեցութիւն չունին սփիւռքեան կեանքի եւ Սփիւռքի քաղաքականութեան ձեւաւորման վրայ: Խնդիրը միայն Հ. Յ. Դաշնակցութեան մէջ չէ: Թէկուզ եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը Սփիւռքի ամէնէն զօրացան ճարպիկ քայլ մը առնել: Մէկ կողմէ յայտարարելով, թէ շահագրգիռ են Հայաստանի հետ երկկողմանի յարաբերութիւններու, միւս կողմէ ալ տպաւորութիւնը միշտ ճկուն այդ յարաբերութիւնները խոչընդոտող հիմնական գործօնը Հայկական Սփիւռքն է: Միեւնոյն ժամանակ փորձել նաեւ պատուիրակութեան անդամները Սփիւռքի հայկական կազմակերպութիւններուն միջև:

Ասիկա, ի հարկէ, ցոյց կու տայ սփիւռքահայութեան բացարձակ մեծամասնութեան դիրքորոշումը եւ ոչ թէ որոշ անհոգիներու հակառակորդի, որովհետեւ Թուրքիա այդ պիտի հանդիպուի մը ընթացքին չէ՛ պէտք դիւրս պիտի չգրաւե՛ն Թուրքիոյ յարաբերութեան մէջ:

Հ. - Պարուի մէջ Թուրքիոյ դիւանագիտական քաղաքականութեան արդիւնները սպասել: Սկզբնական շրջանը - Ազրպէյճան ուղղակի յարաբերութիւններու հաստատումն ու երկկողմանի բանակցութիւններն են Հեռանկարը: Չարքայ լուծման ամէնէն կարճ եւ արդիւնաւէտ ուղին:

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

«ԱՉԳԱԿ»-ի ՀԵՌԱՉԱՅԻՆ ԹԻՒԻԵՐԸ
«ԱՉԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:

ՔԻՐՏԵՐԸ ԿԸ ՄԵՐԺԵՆ ՆԵՐՈՒՄԻ ՆՈՐԱԳՈՅՆ ԱՌԱՋԱՐԿԸ

Քիւրտ բարձրաստիճան ղեկավար Մուրատ Քարալըյան մերժած է Թուրքիոյ կողմէ քիւրտ զինեալներուն կատարուած ներումի փոխարէն անձնատուութեան առաջարկը՝ սպառնալով դարձեալ յարձակումներու սկսիլ:

Անգարա անցեալ շաբաթ յայտարարած էր, թէ մշակած է օրինագիծի մը նախագիծը՝ քաղաքացիական համար քիւրտ զինեալները, որ իրենց գէնքերը վար դնեն եւ վերջ տան շուրջ երկու տասնամեակներու պայքարին՝ անոնց առաջարկելով ներում կամ պատիժներու մեղմացում:

Ըստ քրտական «Խօզկիւր Փոլիթիքա» թերթին, Քարալըյան յայտնած է, թէ օրինագիծը «զղում կը պարտադրէ: Անիկա կ'ըսէ. «Ձեզ պիտի բնաջնջենք, եթէ անձնատուը չըլլաք եւ տեղեկութիւններ չփոխանցէք»:

1999-ին ի վեր շրջանին մէջ բախումները նուազած են: Այդ թուականին քիւրտ զինեալները յայտարարած էին, թէ գէնքերը վար պիտի դնեն՝ քրտական տագնապին քաղաքական եւ խաղաղ լուծում մը գտնելու նպատակով: Թուրքիա զինադուլին կարեւորութիւն տուած չէ եւ անոր բանակը կը շարունակէ հետապնդել քիւրտերը: Կ'ենթադրուի, որ շուրջ 5000 քիւրտ զինեալներ հիւսիսային Իրաք ապաստանած են:

Քարալըյան ըսած է, որ քիւրտերը անցնող չորս տարիներուն խաղաղութեան համար ճիգեր ի գործ դրած են՝ աւելցնելով սակայն, որ այդ ժամանակամիջոցին անոնք շարունակած են իրենք զիրենք պատրաստել հաւանական նոր պատերազմի մը:

Ան յայտնած է, որ քիւրտերը մինչեւ 1 Սեպտեմբեր պիտի սպասեն՝ տեսնելու համար, թէ Անդարա պատրաստ է քիւրտերուն յաւելեալ իրաւունքներ շնորհելու հարցով բանակցիլ Քիւրտիստանի Ազատութեան եւ Ժողովրդավարութեան խորհուրդին (ԲԱՏԻՔ) հետ:

ՔԱՐԻՒՂԻ ԶԱՓՈՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԸ ՀԵՌԱՅԻՆ ԱՉՐՊԵՅՃԱՆԵՆ

«Ռուսէներճի» լրատու գործակալութիւնը տեղեկացուց, որ քարիւղի ճափոնական ընկերութիւնը մը դադարեցուցած է Ազրպէյճանի մէջ պեղումի իր աշխատանքները: Ժափոնական «Ճափոն - Ազրպէյճան Օվերլէյթինգ Բաժնային» քարիւղի ընկերակազմութիւնը «Նանաս Թաւա» եւ «Աթէլ Բիսիս» ծովային հանքերուն մէջ իր հետախուզական պեղումները արգիւնքները ուսումնասիրելէ ետք որոշած է կասեցնել Ազրպէյճանի մէջ իր գործունէութիւնը:



FUEL CARDը

գործածեցէք

Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւղը փոխելու կամ գանոնք լուալու պարագային:

Երբ մագուիթ պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով 04 / 715111 - 222 - 333 թիւերուն:

- ▶ MANAR - Տոքա
- ▶ ՍԱՐԳԻՍԵԱՆ - Պոլսը Գամուտ
- ▶ BASSIL - Տոքա, կամուրջի մօտ
- ▶ AKEL եւ BASSIL - Տոքա, «Քրետի Լիպանէ» մօտ
- ▶ SPEED - Գանքաշ, Կալէրի Իթքիստ
- ▶ ԳԱՅԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմագա»
- ▶ MALLAH - Աճթիլիս, կաթողիկոսարանի դիմաց

- ▶ MALLAH - Գարեք Դաուարնէ
- ▶ MALLAH - Պսալիմ
- ▶ MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի
- ▶ CORAL - Էշնեֆիէ, Ս. Յակոբ Եկեղեցւոյ մօտ
- ▶ SAAD - Մար Միայել
- ▶ SPEED - Նահր, «Փօթօ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնճարի մուտքին
- ▶ MALLAH - Պապալտէք

7րդ Արուեստ



ՎԱԻԵՐԱԳՐԱԿԱՆ ԺԱՊԱՒԷՆՆԵՐՈՒ ՄԱՐՍԷՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 14ՐԴ ՓԱՌԱՏՕՆԸ՝ ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԻՆ ՄԷՉ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ ԶԳՏԱԾ ՆԻԹԵՐՈՒ ԱՐԾԱՐԾԱՆ ԲԵՄԸ

Վաւերագրական ժապաւէններու միջազգային փառատօնը, որ ամէն տարի Մարսէյի մէջ իր շուրջ կը հաւաքէ աշխարհի զանազան երկիրներէ եկած եւ ընկերային ու հաւաքական կեանքի իրականութիւնները իրենց մերկութեան մէջ ներկայացնել փորձող վաւերագրական կարճ ու երկար ժապաւէններ, այս տարի տեղի ունեցաւ 27 Յունիսէն 2 Յունիս:

Այս տարուան փառատօնը յատկանշող երեւոյթը Ֆրանսայի տարածքին երկրորդ շարժապատկերի եւ ցուցադրութեան արուեստի պաշտօնեաներու կատարած գործադրումն էր, որ սպառնալիքի մասնացոյցեցաւ ոչ միայն Մարսէյի Վաւերագրական ժապաւէններու միջազգային 14րդ փառատօնին, այլ նաեւ ամբողջ երկրին տարածքին ամբար ամիսներուն տեղի ունենալիք մշակութային փառատօններուն դիմաց: Ստեղծուած անկ կայուն ծրագրուած գալու փորձով մը, փառատօնին նախագահը Ժան-Փիեռ Ռեմի, փառատօնին նախօրեակին գործադրութիւն յայտնեց գործադրուող կատարող պաշտօնեաներուն, սակայն միաժամանակ կողմնակից անոնք, որ օժանդակեն «Վաւերագրական ժապաւէններու ցուցադրութեան փառատօնին եւ անոնց պատմները, որոնք սահմանափակուած պիտի ըլլան փառատօններու եւ հեռատեսիլի կայաններու ծիրէն ներս ցուցադրութեամբ, հասցնելու աշխարհին: Փառատօնին նախագահին այս կողմնակից արդիւնքը տուաւ, երբ յարգ օրն իսկ փառատօնը



Վաւերագրական ժապաւէններու միջազգային 14րդ փառատօնին որմազը

սկսաւ իր աշխատանքներուն:

Ինչ կը վերաբերի փառատօնին ընթացքին ցուցադրուած ժապաւէններուն, որոնց մեծ մասը իրականացած է շարժապատկերի սրահներուն մէջ ցուցադրուող ժապաւէններուն շտապ գոտիներուն, ապա անոնք կը տարուբերէին վաւերագրական եւ գեղարուեստական ժապաւէններու սեռերուն միջեւ: Վաւերագրական ժապաւէնի այս լայն ընթացքով ներկայացած ժապաւէնները թէեւ թեմաներու առումով հասարակ յայտարարներ չունենին, սակայն անոնք կը յատկանշուէին իրենց գաղափարները արտայայտելու անկախութեամբ, նորարար շունչով եւ վաւերագրական ժապաւէններու ընկալեալ արժեքներէն դուրս գալու մղումով: Ֆրանսական «Լը Մոնտ» թերթին մէջ լոյս տեսած յօդուած մը Մարսէյի Վաւերագրական ժապաւէններու միջազգային 14րդ փառատօնին մասնակցած ժապաւէնները նկարագրած է իբրեւ հաւաքական կամքի արտայայտութիւն՝ բացայայտ-

լու այն, ինչ որ սպառնալիքի տակ լուրս թան մատնուած է եւ՝ տեղեկատուական թէ գեղարուեստական աիրպետող արտայայտչաձևիցներու կողմէ ճնշուած:

Այսպէս, չինական «Թայ չի քու» ժապաւէնը (բեմադրիչ՝ Ուանկ Պինկ), որ տիրացաւ փառատօնին միջազգային դատական կազմին «Կրան փրի» մրցանակին, կը ներկայացնէ հիւսիսարեւելեան Չինաստանի նախկին ճարտարուեստական մէկ շրջանի բնակիչներուն ապրումը, որ կը յատկանշուի մեծ թիւով անկործ երիտասարդներու եւ չափահասներու ներկայութեամբ: Պատումէ գոլրկ այս ժապաւէնը առանց խօսքերու, այլ

միայն պատկերներու եւ երաժշտութեան լեզուով կը պաշտպանէ անգործ ապրելու դատարար տուած սերունդի մը դատը:

Ընկերային այլ դատ մը պաշտպանող ժապաւէն մըն է իսրայէլացի բեմադրիչ Նիցան Կիլատիի «Ին սաթմար քասթրոն», որ «Ինթերնէշնալ Զերլուս Թրիպիոն» թերթին մէջ բեմադրիչին իսկ բառերով կը նկարագրուի իբրեւ «2003ի Ամերիկային մէջ պատահած Գաֆթայի պատմութիւնը»: Փառատօնին «Փրի փյալնէթ» մրցանակին արժանացած այս ժապաւէնը կը պատմէ ամերիկացի հրեաներու սաթմար հաւաքականութեան մէջ մուտք գործած եմէնցի սեֆարտական հրեայ ընտանիքի մը դէմ

գործուած ընկերային անարդարութիւնները: «Ին սաթմար քասթրոն»-ը կը ըսէ բեմադրիչը՝ «պարզ ժապաւէն մը չէ եւ դիւրաւ ընկալելի չէ օտար (ոչ հրեայ) հանդիսատեսներուն կողմէ: Ժապաւէնը թու ինքնութիւնը եւ ցեղային իւրայատկութիւնը կորսնցնելու մասին է եւ ոչ թէ սոսկ իր գաւակները կորսնցնելու գոյգի մը պատմութիւնը: Եմէնցի հրեաները երրորդ աշխարհի երկրէ մը կուրան դէպի արդի աշխարհ, ուր սակայն յարգալից վերաբերում չեն գտնէր»:

Մարսէյի Վաւերագրական ժապաւէններու միջազգային 14րդ փառատօնին յատկանշական այս ժապաւէններէն նշենք Ֆրանսական դատական կազմին «Կրան փրի» մրցանակին արժանացած «Ռիպլաց, Ռիպլաց» (բեմադրիչ՝ Մարի-Զելէն Ռեպուա), առաջին ժապաւէնի մրցանակին տիրացած «Ճըրմընի. ուէյթ կրատունտ» (Պորիս Պրեքթ) եւ միջազգային դատական կազմին կողմէ յատուկ յիշատակութեան արժանացած «Տը պլոպ» (Կերթի Վերսոլըն), «Սթորի» (Տանա Ռո) եւ «Սքրի մինկ մէն» (Միքա Ռոնքայնըն) վաւերագրական կարճ եւ երկար ժապաւէնները:

Նոր ժապաւէններ

«2 ՖԱՍԹ ԷՆՏ 2 ՖԻԻՐԻԸՍ»
Բեմադրիչ՝ ՃՈՆ ՄԻՆԿԵԼԹԸՆ



2001ին էջըն ժապաւէններու սիրահարներուն գոհացում տուած եւ տոմսակներու վաճառքի արդիւնքներուն մէջ ուշագրաւ շահ ապահոված «Տը ֆասթ Էնտ տը ֆիւրիւս» ժապաւէնին շուկայական յաջողութեանէ ետք, այս տարի հրապարակ կ'իջնէ անոր երկրորդ մասը՝ «2 Ֆասթ Էնտ 2 Ֆիւրիւսը»: Ժապաւէնին երկրորդ բաժինին մէջ նախկին ոստիկան Պրայըն Օ'Քանըրը դարձեալ կը վերադառնայ հրապարակ այս անգամ ոստիկաններուն օգնելու, որպէսզի կարելի ըլլայ յայտնաբերել թմրեցուցիչի կապուած մեծ գումարներ: Ժապաւէնին հետեւող արշաւին մեծ մասը տեղի կ'ունենայ փողոցներուն մէջ, փայլուն եւ սրբնթաց ինքնաշարժներու յաճախ շտապ ցուցարարական մրցումներով: Անոր օգնելու կը փութայ «փորձառու» բանտարկեալ մը (Քիթրեզ), որուն համար այս գործողութիւնը ոստիկանութեան համակարգը շահելու եւ իր ազատութիւնը ապահովելու միջոցն է:

Ինքնաշարժներու մրցումներով, արկածներով եւ աղմուկով յատկանշուող այս ժապաւէնը հարուստ է էջընի տեսարաններով, սակայն գուրկ է հետաքրքրական դիպաշարք մը, իսկ խաղարկութիւնը կը մնայ միջակութեան սահմաններուն մէջ:

«ՏԸ ՌԻՍԵՏ ԹՈՐՆՊԵՐՉ»

Բեմադրիչ՝ ՃՈՆ ԷՆԿ ԵՆ ՆՈՐԹԸՆ ՎԵՐՏԻԷՆ

Նաեւ «Ռակրեթց կօ ուայլտ» խորագիրով ծանօթ այս կենդանի գծանկարը հաւասարապէս կը վերաբերի թէ մանուկ եւ թէ չափահաս հանդիսատեսներուն: Թորնպերի ընտանիքը, որ նախորդ երկու կենդանի գծանկարներուն մէջ վաւերագրական ժապաւէններ պատրաստելու համար կը ճամբորդէ աշխարհի չորս կողմը, արձակուրդի համար կը մեկնի ափրիկեան ափերը: Անոնց կը միանան նաեւ Կոնգոյի Ենթարկուած չորս բարեկամ ընտանիքներ: Հետաքրքրական է, որ այս կենդանի գծանկարը հանդիպման վայրը կը հանդիսանայ կենդանի գծանկարներու երկու արտադրութեան՝ Թորնպերիներուն եւ Ռոկլըթներուն, որոնք պիտի գործակցին գոյատեւելու համար: Անմարդաբնակ այդ կողմին վրայ առնուրդ կ'ապրին արկածախնդրական պահեր: Նշենք, որ ժապաւէնը հարուստ է նաեւ մեծերու յատուկ հիւմըրով:

«ՔՈՆՖԻՏԸՆՍ»

Բեմադրիչ՝ ՃԵՅՄ ՅՈՒԼԻ



Էնտի Կարսիայի եւ Տասթին Հոֆմանի խաղարկութեամբ այս ժապաւէնը կը ներկայացնէ երկու մաֆիաներու միջեւ մրցակցութեան պատմութիւն մը՝ տիրանալու համար մեծ գումարի: Անշուշտ ներկայ է նաեւ գաղտնի ոստիկանը, որ յարմար առիթի կը սպասէ գանձը արդարադատութեան յանձնելու համար: Ինչպէս այս բնույթի այլ ժապաւէններու մէջ, հոս եւս միջեւ վերջին վայրկեանը կարելի չէ յստակ գիտնալ, թէ ո՞վ է դրական հերոսը եւ ո՞վ ժխտականը: Իւրայատկութեան գուրկ, սակայն դերակատարներուն խաղարկութեան շնորհիւ փրկուող այս ժապաւէնին մէջ դեր ստանձնած են նաեւ էտուրըր Պրոնգ եւ Ռէյչըլ Ռեյչը:

Պատրաստեց՝ ՊԵՐԹ ՓԱՆՈՍԵԱՆ

www.hamazkayin.com

ՎԱՐՈՂՎԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՆ ՊԱՉԻԼ ԱՐՀԵՍՏԻՅ ԿԵԴՐՈՆԻ ՎԿԱՅԱԿԱՆԱՅ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ - ՏՔՈՒԷՅՆԸ

Սան Պազլի Արևեստից Կեդրոնը կազմակերպեց 2002 - 2003 տարեշրջանի իր ուսանողներուն շրջանաւարտից հանդիսութիւնը: Շրջանաւարտները եղան գեղեցկագիտութեան, շպարումի, արական եւ իրական յարգարումի, նորածնութեան յղացումի եւ ծեւգիտութեան, գոհարեղեններու կաղապարներու ծեւաւորման եւ փորագրման, գոհարեղեններու շինութեան, աղամանաշարութեան մէջ շնորհակալութեան արարածներու մասնակցած ժապաւէնները նկարագրած է իբրեւ հաւաքական կամքի արտայայտութիւն՝ բացայայտ-



Հիմնարկին տնօրէն խորհուրդի նախագահ Շառլի Պասլի խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց ներկայ անձնակազմին եւ կազմակերպչներուն եւ շնորհաւորեց հիմնարկին գեղարուեստական շաքարները: Սան Պազլի Արևեստից Կեդրոնը բարձր կը պահէ Լիբանանի անունը եւ կը նկատուի անոր բարգաւաճման:

TANIA TRAVEL
Sodeco Square - Rue Damas
Tél: (01) 616555 (pbx) - Fax: (01) 616561
Hue Sidani - Face cinéma Jeanne d'Arc
Tél: (01) 739682 (pbx) - Fax: (01) 340473
Website: <http://www.taniatravel.com>

CHARTERS ARMENIE
Programme avec Tours (7 et 8 jours)

ATHENES
RHODOS, MYKONOS, CORFU & CRETE
Croisières vers les îles Grecques

RHODES (8 jours)
Départs tous les Mardis à partir du 15/07

PARIS+COTE D'AZUR
Avion + Grand choix d'Hôtels en B/B
Possibilité d'extension à Lourdes, EuroDisneyland

ITALIE (du Nord et du Sud)
10 Programmes différents (8 & 15 jours)

AUTRICHE
Différents programmes, Hôtels, Tours

ESPAGNE, PORTUGAL et MAROC (Villes Impériales)
10 Programmes différents (8 & 18 jours)

EGYPTE
Le Caire & Croisière sur le Nil-Louxor & Assouan
Sharm el Sheikh, Hurgada, Alexandrie

CIRCUIT TUNISIE
Sousse & Hammamet

MALAISIE & THAILANDE
Différents programmes (Tours organisés)

POSSIBILITES DE CREDIT

Jal-el-Dib: 710305/67, Jounieh: 913746/934465
Bikfaya: 982040 Kaslik: 218821/213321
Jbail: 942744/943338 Zghbe: 069291/602392
Saïda: 730870/736870 Tripoli: 627755/602469
Amioun: 950075

Balkan Holidays
TRANSLITEX TOURS
ԴԵՊԻ ՎԱՌՆԱ ՇՐՋԱՊԱՏՈՅՏՆԵՐՈՒ 36 ՏԱՐՈՒՆԱՆ ՓՈՐՉԱՌՈՒԹԻՒՆ

Varna Summer

245\$ սկսեալ

24ր թիշնները կապալեցէք մեր սեփական օդանավերով տուպազոյն սակեր 245\$ էն սկսեալ (Արեւմտեալ շրջապատիսին հիմնական ծախսերը)

Balkan Holidays
VARNA EXPERT NO. 1
Look after No. 1. Let No. 1 Look after you.
CORNICH MAZRAA WAKF ROOM CENTER - BANK AUDI
TEL.: 1/304553 - 304563 FAX: 9611/310424 BEIRUT - LEBANON

ԺԱՊԱՒԷՆՆԵՐ - ԿԱՐԾԻՔ

- «2 ՖԱՍԹ ԷՆՏ 2 ՖԻԻՐԻԸՍ» (Ամփիր / Տիւն, Սեթ Էլի, Սոտեթ, Սքալլէտ 2001, Լաւ Սալիմա, Կալաքսի, Սքարլէթ)
- «ԸՆԴՆՖԻՏԸՆՍ» (Փլանք / Չուք, Ապրաժ, Զալիք)
- «ՏԸ ՌԻՍԵՏ ԹՈՐՆՊԵՐՉ» (Փլանք/Ապրաժ, Չուք, Բընըրոտ, Ֆրիոնէյ, Թրիփոլի)
- «ՉՈՐԼԻԶ ԷՅՆՃԸԸ» (Ամփիր/Տիւն, Եսիսա, Սոֆիլ, Սեթ Էլի, Սոտեթ, Սքալլէտ 2001, Լաւ Սալիմա, Կալաքսի, Սքարլէթ, Ֆրիոնէյ)
- «ԼԻԶԶԻ ՍԵԿՈՒՅՈՐ ՍՈՒԿԻ» (Փլանք/ Ապրաժ, Չուք, Բընըրոտ, Թրիփոլի)
- «ԹՈՒ ԶԻԼ Է ԶԻՆԿ» (Ամփիր/Սոտեթ, Սքալլէտ 2001, Լաւ Սալիմա)
- «ՏԸ ԲՈՐ» (Փլանք/Չուք, Ապրաժ, Բընըրոտ, Ֆրիոնէյ)
- «ՏԵՅ» (Փլանք/Չուք, Ապրաժ, Բընըրոտ)
- «ՖՈՐԷՅՆԸՆ» (Ամփիր/Եսիսա, Կալաքսի, Ֆրիոնէյ)
- «ՃՈՆԻ ԻՆԿԼԻԶ» (Փլանք/Զալիք, Ամպաստ, Ապրաժ)
- «ԷՅՆՃԸՆԸ ԲՈՏԻ ՊԵՆՍ» (Ամփիր/Տիւն, Սքալլէտ 2001)
- «ՍԵՐԵԹԸՐԻ» (Ամփիր/Սոֆիլ)
- «ԷՆԿՈՐ ՍԵՆՅՈՒՆ» (Ամփիր/Տիւն, Եսիսա, Սեթ Էլի, Սոտեթ, Սքալլէտ 2001, Լաւ Սալիմա, Կալաքսի)
- «ՌԵՅԻՆԿ ԱՓ ԻՆ ՌԻՆՕ» (Փլանք/Բընըրոտ, Թրիփոլի)
- «ՇԵԿԸՆ» (Փլանք/Չուք)
- «ՖՈՆ ՊՈՒԹ» (Ամփիր/Սոտեթ, Սքալլէտ 2001, Կալաքսի)
- «ՊՐԻՆԿԻՆԿԱ ՏԱՌԻ ՏԸ ԸՆՈՒՍ» (Փլանք / Չուք, Ապրաժ, Բընըրոտ, Ֆրիոնէյ)
- «ՏԸ ՍԵՅԹՐԻԷՍ ՌԻԼՆՏԸՏ» (Ամփիր / Տիւն, Եսիսա, Սոտեթ, Սքալլէտ 2001, Կալաքսի):
- «ԹԱՆՍԻ 3» (Փլանք/ Ապրաժ, Չուք)
- «ՏԱՌԻ ԹՈՒ ԼՈՒԷ Է ԿՍԻ ԻՆ ԹԵՆ ՏԵՅ» (Փլանք / Ապրաժ, Զալիք, Բընըրոտ, Ֆրիոնէյ, Ամպաստ)
- «ՃԱՍԹ ՍԵՐԻՆ» (Ամփիր/Կալաքսի, Սքարլէթ)

●●●●● Գերազանց ●●●●● Չատ լաւ ●●●●● Լաւ ●●●●● Միջակ ●●●●● Չենք յանձնարարել ●●●●● Չենք դիտած

ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՍՐԱՀՆԵՐՈՒՆ ԷՆՈՒԱԶԱՅՆԻ ԹԻՒՆԵՐԸ
Էսիսա.- 09/212516 - Սոտեթ.- 01/616707 - Տիւն.- 01/792123 -
Փրիոնէյ.- 01/328806 - Բընըրոտ.- 01/738439 - Ամպաստ.- 09/226010
Ֆրիոնէյ.- 01/485590 - Ապրաժ.- 01/292192 - Զալիք.- 09/912503 - Չուք.- 09/221363
- Սքարլէթ.- 08/813901 - Սեթ Էլի.- 04/443992, Թրիփոլի.- 06/442471:

Համազրչիվեցրու Եւրոպի

ԱՇԽԱՐՀԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՎԱՅՐԵՐ

ԵՆՒՆԵՍՔՕ 24 ՆՈՐ ՎԱՅՐԵՐ ԿԸ ՆԵՐԱՈՆԵ ԱՇԽԱՐՀԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԻՐ ՅԱՆԿԻՆ ՄԷՋ: ԱՆՈՆՑ ԶԱՐՔԻՆ Է ԱՆԱՇԽ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՏԱՃԱՐ ՄԸ ԻՐԱՆԻ ՄԷՋ: «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԿԸ ՆԵՐՎԱՅԱՑՆԵ ՑԱՆԿԸ.

Աշխարհի Ժառանգութեան Ցանկը հիմնուած է 1972ին, Աշխարհի Մշակութային եւ Բնական Ժառանգութեան Պահպանման Ուխտին համաձայն, ՄԱԿի Կրթական, Գիտական եւ Մշակութային Կազմակերպութեան կողմէ: Անոր գլխաւոր նպատակն է Աշխարհի Ժառանգութեան Դիմադրամին միջոցով արհեստագիտական գործակցութիւն ապահովել պետութիւններու, որոնց աղբիւրները անբաւարար են՝ պահպանելու համար Աշխարհի Ժառանգութեան մաս կազմող եւ համաշխարհային արժէք ներկայացնող իրենց ստացուածքները: Պետութիւններ Աշխարհի Ժառանգութեան Ցանկին մաս կազմող իրենց վայրերը պահպանելու համար կրնան միջազգային օգնութեան դիմել այս հիմնադրամին պայմաններով: Դիմադրամը կը ընձեռէ մասնագէտներու պատրաստութիւն, անհրաժեշտ կազմածներ եւ երկար ժամանակի վրայ վճարելի փոխառութիւններ կամ կարգ մը յատուկ պարագաներու՝ նիւթական ձրի օգնութիւն: Այս տարի ԵՆՒՆԵՍՔՕի հրապարակած ցանկին մէջ ակնկէտ են քաղաքական նկատառումներով կատարուած ընտրութիւնները: Մինչ նախագահ Պուշ կ'այցելէ Ափրիկէ՝ ամերիկեան զինուորական ներկայութեան մը հեռակայանով, ամերիկեան շարք մը երկիրներու մէջ առաջին անգամ ըլլալով համաշխարհային արժէք ներկայացնող վայրեր կը ներառուին այս ցանկին մէջ: Յատկանշական է գերեզմանային արժէքներու նշանակումը (ներառուած են Վերականգնման արժէքները, իրաքի պատմութիւնը կ'արժեւորուի աւերուած եւ վերականգնման արժէքները, իրաքի պատմութիւնը կ'արժեւորուի աւերուած եւ վերականգնման արժէքները, իրաքի պատմութիւնը կ'արժեւորուի աւերուած եւ վերականգնման արժէքները, իրաքի պատմութիւնը կ'արժեւորուի աւերուած եւ վերականգնման արժէքները, իրաքի պատմութիւնը կ'արժեւորուի աւերուած եւ վերականգնման արժէքները), իրաքի նախախնամական անցնելով կը փառաւորուի գրադարանական մեծեան մը լուսարձակի տակ ամենայն, Իսրայէլի մէջ իրականացուող գոյութիւնը կը վերաբերուի 1930ական տարիներու բնակավայրերու ընտրութեանը...

Մալուին գետերը կ'անցնին այս գաւառէն: Ասիոյ մեծագոյն այս երեք գետերը գոլգոլէն կը հոսին խորունկ կիրճերէ, 3000էն 6000 մեթր բարձրութեան վրայ: Գաւառը այժմ մաս կը կազմէ ԵՆՒՆԵՍՔՕի ցանկին: Զուլիցերիս. Մոնթէ Սան Ժիորճիո անտառածածկ եւ քրգածեւ լեռը կը պարփակէ 250 միլիոն տարուան ծովային բարձրներ, որոնք ցարդ լաւագոյն են իրենց տեսակին մէջ: Մոնկոլիա. Ուլս Նուրի աւազանը մէկ միլիոն հեկտար տարածութեան վրայ կը հլուրընկալէ թռչուններու այլազան տեսակներ եւ բնակավայրէ մկնաճագարի, բեւեռային կատուններու, ճիւղարնակ յովազի, լեռնաբնակ ոչխարի եւ ասիական վայրի քաղի (այլաբոյ): Վիեթնամ. Յոնկ ՆՆայի մէջ Քէ Պանկի Ազգային զբօսայգիին տեսարժան եւ ծառախիտ բարձրաւանդակ մըն է, որ կ'ընդգրկէ ստորերկրեայ քարայրներ եւ գետեր: Անիկա ծածկուած է գլխաւորաբար անթրեւային անտառներով: Աֆղանիստան. Պամիսի Նոպիտը նախապէս կ'ընդգրկէր Պոտտալի երկու հսկայական արձաններ, զորս թաւաքանները պայթեցուցին 2001ի Փետրուարին՝ դատապարտումի արդէ մը բարձրացնելով աշխարհի տարածքին: ԵՆՒՆԵՍՔՕ կ'ըսէ, թէ ընտրութիւնը «կը խորհրդանշէ միջազգային ընտանիքին այն յոյսը, թէ անհանդուրժողութեան ծայրայեղ արարքներ, ինչպէս՝ Պոտտալի արձաններուն դիտումնաւոր քանդուումը, անգամ եւս պիտի չկրկնուին»: Արժանիքն. Քուեպարտոս տէ Հուսուհուարան առեւտուրի գլխաւոր ճամբայ մըն է 10 հազար տարեկի Վիեթնամի: Հոն կարելի է գտնել ինքնաբերական կայրութեան (15րդ դարէն 16րդ դար) հետքեր, ինչպէս նաեւ՝ 19րդ եւ 20րդ դարերուն մղուած անկախութեան պայքարին առնչուող վայրեր: Չիլի. Վալդիարայոյի նաւահնդիստ քաղաքին պատմական թաղամասը Հարաւոր Ամերիկայի մէջ 19րդ դարու վերջերու քաղաքային ճարտարպետութեան հետաքրքրական օրինակ մըն է: Զեխիոյ Հանրապետութիւն. Հրէական թաղամասն ու թրեպիլի մէջ Ս. Փրոքսիփոսի մատուռը միջնադարէն մինչեւ 20րդ դար հրէական եւ քրիստոնէական մշակութիւններու գոյակցութեան յիշեցումներ են: Հրէական թաղամասը լուսարձակի տակ կ'առնէ այժմ անհետացած ժամանակաշրջանի մը պարծան հաւաքակառուութիւն, իսկ Ս. Փրոքսիփոսի մատուռը, որ կառուցուած է 13րդ դարուն, շրջանին մէջ արեւմտեան ճարտարպետութեան ազդեցութեան օրինակ մըն է: Կամպիա. Ճէյմս Ալլընտ եւ յարակից վայրեր կարեւորութիւն կը ներկայացնեն՝ գերբվածառութեան սկիզբին եւ արգիլուածին հետ իրենց կապակցութեան համար: Վայրը կանուխէն դարպաս մը եղած է ղէպի Ափրիկէի սիրտը: Հնդկաստան. Պիպիլիթայի ժայռեղէն ապաստանները կը գտնուին Վիստահայան լեռներու ստորոտին, հնդկական հարթավայրին հարաւային ծայրամասին: Անոնք կը պարփակեն բնական 5 ապաստանարաններ ժայռերու մէջ, որոնք կ'ընդգրկեն Միլիթի Քարէ ժամանակաշրջանէն մինչեւ պատմական ժամանակաշրջանի պատկանող ժայռապատկերներ: Իրան. Հիւսիսարեւմտեան Իրանի մէջ թախթ Սուլէյման հնագիտական վայրը կ'ընդգրկէ Մասանեան ժամանակաշրջանի (Յ. Ք. 3րդ դար) գրադարանական գլխաւոր սրբարան մը՝ նուիրուած Անահիտ աստուածուհիին: Վայրը մասամբ կանաչըջանիլի՝ 13րդ դարուն: Իրաք. Հնագրեան Աշուր քաղաքը կամ Քալաթ Շերբաթը կը պատկանէ Ն. Ք. 3րդ հազար տարեկանին: Անիկա Ն. Ք. 14րդ դարէն 9րդ դար Ասորեստանի կայսրութեան առաջին մարաքաղաքը եղած է: Քաղաքը քանդուած է բարելոնացիներու կողմէ, սակայն վերականգնացած է պարթեւներու ժամանակաշրջանին, Յ. Ք. առաջին եւ երկրորդ դարերուն: Իսրայէլ. Թէլ Աւիւի Սպիտակ քաղաքը կամ Իրաքի ճարտարպետութեան շարժումի խորհրդը՝ դարձնել կառուցուած է 1930ական տարիներու սկիզբէն մինչեւ 1948: Ծէնքերը ձեւագծուած են Եւրոպայի մէջ մասնագիտացած ճարտարպետներու կողմէ, որոնք ստեղծած են արդի ճարտարպետութեան իւրայատուկ մէկ տեղում մը՝ մշակութային նոր պարունակի մէջ: Իտալիա. Հիւսիսային Իտալիոյ մէջ 9 լեռներ, որոնք ծածկէ են Փիեմոնթի Սորբան Լեռներ անունով, նաեւ Լոմպարդի մէջ 16րդ եւ 17րդ դարերու պատկանող եկեղեցիներ, որոնք նուիրուած են քրիստոնէական հաւատքի տարբեր երբեւտյիներու, մաս կը կազմեն ԵՆՒՆԵՍՔՕի ցանկին: Ղազախստան. Խոնա Աճմէտ Եաստուրի դամբարանը կը գտնուի Եասի գիւղաքաղաքին մէջ: Կառուցուած է 1389էն 1405ի միջեւ: Անիկա Անիկ-թիմուրի ժամանակաշրջանէն (1370էն 1507) մնացած ամէնէն մեծ եւ լաւագոյն պահպանուած կոթողներէն է: Մեքսիքա. Քուեպարտոյի Սիերա Կորտա շրջանին մէջ Ֆրանսիսքան քարոզիչներու եկեղեցիները կառուցուած են Մեքսիքայի մէջ քրիստոնէութեան տարածումի վերջին շրջանին, 18րդ դարու կէսերուն: Յատկանշական հետաքրքրական են հարուստ գարդարանքով եկեղեցիներուն ճակատները, որոնք քարոզիչներուն են բնիկ հնդկականներու միջեւ ստեղծագործական գործակցութեան օրինակներ են: Լեհաստան. Հարաւային Լեհաստանի փայտէ եկեղեցիները միջնադարեան եկեղեցաշինութեան



ԶԻՈՒ ՊԱՐՏԵՂՆԵՐԸ Լոնտոնի հարաւորեցւած շրջանին մէջ 132 հեկտար տարածութեան վրայ սփռուած Քիոյ պարտեզները կը պարփակեն աշխարհի ամենէն հնչակաւոր բուսաբանական ջերմանոցները եւ աւելի քան 40 պատմական կառոյցներ, ինչպէս՝ Շարլոթ բազիլիկին հիւղակ ու Քիո պալատը: Անոնք լայն տարողութեամբ կը նպաստեն կենսաբանական այլազանութեան պահպանումին ու ըմբռնումին: Անցալ տարի եւ այս տարուան սկիզբը աշխարհի ամենէն մեծ եւ ամենէն գարշահատ ծաղիկը՝ Ամորֆոֆալուս Թայմուսը հարիւրաւոր այցելուներ ներգրուեց, երբ ծաղկեցաւ այս պարտեզներուն մէջ, ինչ որ հազարաւոր իրադարձութիւն մըն է: Բրիտանիոյ կենսաբանական ճարտար գնահատած է Քիո պարտեզները, ըսելով՝ թէ ԵՆՒՆԵՍՔՕի կողմէ տրուած պատիւը «աւելի եւս կ'ընդգծէ Քիոյ համաշխարհային անմրցելի համբաւը»: Զբօսաշրջիկներ ներգրուելու կողքին, Քիո գիտական աշխարհահռչակ կազմակերպութիւն մըն է եւ միջազգային յարգանք կը վայելէ ապրող բոյսերու իր հաւաքածոյով, ինչպէս նաեւ՝ գիտական ուսումնասիրութիւններով: Պարտեզներուն տնօրէնը կ'ըսէ. «Աշխարհի Ժառանգութեան վայրերու շարքին դասուած է մեծապէս կախարհավոր մէջ: Անիկա վերականգնուած կնիք մըն է, որ մեզ կը տեղադրէ աշխարհի լաւագոյններու շարքին եւ կ'ապահովէ յանգիստ կարգ ու հանրային գիտակցութիւնը»:

Պատերազմի եւ քաղաքային խռովութիւններու թատերաբեմ դարձած Իրաքի հնադարեան Աշուր քաղաքը եւ Աֆղանիստանի մէջ Պամիսի Նոպիտը, ուր Պոտտալի հսկայական արձաններ քանդուեցան թաւաքաններով վարչակարգի ժամանակ, ՄԱԿի Կրթական, Գիտական եւ Մշակութային Կազմակերպութեան կողմէ ներառուած են աշխարհի Ժառանգութեան վտանգուած վայրերու ցանկին մէջ: Կամպիոյ, Ղազախստանի, Մոնկոլիոյ եւ Սուդանի մէջ յատկանշական վայրեր առաջին անգամ ըլլալով կը միանան Աշխարհի Ժառանգութեան ցանկին, որ այժմ կ'ընդգրկէ «համաշխարհային իւրայատուկ արժէք» ներկայացնող

754 վայրեր, ինչպէս կը յայտարարէ ԵՆՒՆԵՍՔՕ:

ՆՈՐ ՆԵՐԱՌՆՈՒԱԾ ՎԱՅՐԵՐ

Աւստրալիա. Փուլոնուրուրի Ազգային զբօսայգին կը գտնուի արեւմտեան Աւստրալիոյ մէջ, 250 հազար հեկտար տարածութեան վրայ: Անոր Պանկ Պանկլ լեռնաշղթային մէջ կան մեղրուկութեան կի նման աւազաբարեր, որոնք մաշած են 20 միլիոն տարուան ընթացքին: Չինաստան. Եռնանի գաւառին մէջ գոլգոլ հեռ երեք գետեր կը տարածուին 1,7 միլիոն հեկտար տարածութեան վրայ: Եանկց, Մեքոնգ եւ

ԵՆՒՆԵՍՔՕԻ ԿԱՅՔԻՆ ՄԷՋ

ՏԱՐԻՆԵՐՈՒ ԸՆԱՅՅԵՆ ԼՍԱԿ ԱՇԽԱՐՀԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՑԱՆԿԻ ՄԱՍ ԿԱԶՄԱԾ ԵՆ ԼԵԱՍԱՆԻ ԵՒ ԼԻԲԱՆԻ ՄԷՋ ՅԱՏՈՒԿ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՎԱՅԱՑՆՈՂ ԴԵՏԵԻԱԼ ՎԱՅՐԵՐԸ

●**ՀԱՅԱՍՏԱՆ** Հաղթանի եւ Սաղաթի վանքերը՝ Թումանյանի շրջանին մէջ (առաջինը ԵՆՒՆԵՍՔՕի ցանկին միացած է 1996ին, երկրորդը՝ 2000ին): Բիւզանդական ժամանակաշրջանի այս վանքերը կառուցուած են Կիրիկեան թագաւորութեան ծաղկումի օրերուն (10րդ դարէն 13րդ դար): Անոնք կը թուրքական կարեւոր կեդրոններ էին: Մասնաւորաբար Մանահինը անուանի էր իր մանրանկարչութեան ղարոցով եւ մանրանկարչներով: Վանական այս երկու համալիրները կը ներկայացնեն հազարամյակ տրոհայի կանգնուած ճարտարապետութեան ծաղկումն, որուն ուրոյն ոճը զարգացած է բիւզանդական եկեղեցական ճարտարապետութեան եւ կովկասեան եւ անաթոլիական բնիկ ճարտարապետութեան տարրերու միաձուլումով: Գեղարդի վանքը եւ Ազատ գետի վերին հովիտը (ԵՆՒՆԵՍՔՕի ցանկին միացած են 2000ին). Կոտայքի մարզին մէջ Գոդթն գիւղին մօտ լեռան մը մէջ փորուած եկեղեցիներէ եւ դամբարաններէ բաղկացած Գեղարդի վանքը հայկական վանական միջնադարեան ճարտարապետութեան եւ զարթոյնի արուեստի ամբողջական օրինակ մըն է, որ իւրայատուկ կերպով լաւ պահպանուած է: Կառուցը կ'ընդգրկէ բազմաթիւ նորարարութիւններ, որոնք հօգր ազդեցութիւն գործած են շրջանին մէջ ճարտարապետական հետազոտող զարգացումներու վրայ: Ազատ գետի հովիտին մէջ միջնադարեան կառուցներու խումբ մը տեղադրուած է գեղեցիկ բնաշխարհի մը մէջ, շրջապատուած՝ աշտարակներով: Էջմիածնի Մայր տաճարն ու եկեղեցիները եւ Զուարթնոցի հնագիտական վայրը (ԵՆՒՆԵՍՔՕի ցանկին միացած են 2000ին). Եկեղեցական ճարտարապետութեան վրայ: Այս երկու վայրերը ցայտուն կերպով կը պատկերեն հայկական եկեղեցիին ոգեղէն եւ գեղարուեստական նորարարութիւնները՝ անոր հիմնադրական նորարարութիւնները՝ անոր հիմնադրական նորարարութեան օրինակները: Անոնք կը պարփակեն հայկական կերպարանական գմբէթի եւ խաչածեւ գաւառի եղափոխութեան ընթացքը, որ մեծ ազդեցութիւն գործած է շրջանին ճարտարապետական եւ գեղարուեստական զարգացումին վրայ:



Հաղթանի վանքը

մի մը փաստը, որ յատուկ է հնադարեան ժամանակներու պայտուղաքաղաքներուն: Այնտարի աւերակները օմայաւորներու քաղաքաշինական ծրագրիներուն իւրայատուկ մէկ վկայութիւնը կը ներկայացնեն: Պալապը (ԵՆՒՆԵՍՔՕի ցանկին միացած է 1984ին). Պեքայի հովիտին մէջ փիւնիկեան այս քաղաքը, ուր կը պաշտուէր աստուածային երրորդութիւն մը, հեյնեական ժամանակներուն ծանօթ էր Հելիոփոլիս անունով: Անոր կրօնական դերակատարութիւնը շարունակուած է հռոմէական ժամանակներուն, երբ Արեւ աստուած ծուրիթըր հազարաւոր ուխտաւորներ կը ներգրաւէր: Պալապը ճարտարապետութեան զարգացումի մասին է գեղեցիկ նմուշներէն է: Պիպլոս (ԵՆՒՆԵՍՔՕի ցանկին միացած է 1984ին). Իրերայաջորդ բազմաթիւ քաղաքակրթութիւններու աւերակները կարելի է գտնել Պիպլոսի մէջ, որ փիւնիկեան հնագոյն վայրերէն է: Նոր Քարէ դարէն ի վեր բնակուած այս վայրը հազարաւոր տարիներէ ի վեր սերտորէն կապուած է Միջերկրականի առասպելներուն ու պատմութեան: Պիպլոս նաեւ ուղղակիորէն կ'առնուի փիւնիկեան այրուբնին պատմութեան ու տարածումին: Սուր (ԵՆՒՆԵՍՔՕի ցանկին միացած է 1984ին). Առասպելին համաձայն, ծիրանի կարմիր գոյնը յայտնագործուած է Սուրի մէջ: Փիւնիկեան այս հօգր քաղաքը կ'ընդգրկէ ծովերուն եւ հիմնած է բարդաւաճ գաղութներ, ինչպէս՝ Քասիգն ու Կարթագէնը, սակայն անոր պատմական դերակատարութիւնը տկարացած է խաչակիրներու ժամանակներու վերջաւորութեան: Սուրի մէջ կան հնագիտական յատկանշական աւերակներ, մասնաւորաբար՝ հռոմէական ժամանակներէն: Քատիշայի հովիտը եւ Մայրիներու պուրակը (ԵՆՒՆԵՍՔՕի ցանկին միացած են 1998ին). Քատիշայի հովիտը քրիստոնէական կանոնի ժամանակներէն վանական միաբանութիւններու կենտրոնը եղած է շարունակաբար: Այս հովիտին եկեղեցիները քրիստոնէական հաւատքի արտայայտութեան ամէնէն յատկանշական օրինակներէն են, որոնք գոյատեւած են երկար ժամանակ: Հովիտին վանքերը քրիստոնէական ամէնէն հին վանական բնակավայրերէն են եւ անոնցմէ շատերը զգալի ազդեցութիւն զնդրով կանգնած են քարաբարձ լեռներու վրայ: Անոնց մօտ կը գտնուի Լիբանոսի մայրիներու սրբազան մասնաւոր մնացորդը՝ Մայրիներու պուրակը: Մայրիները հին աշխարհի ամէնէն յարգի շինանիւթերէն է հին եւ կ'օգտագործուէին կրօնական կառուցներու մէջ:

●**ԼԻԲԱՆԱՆ** Այնճար (ԵՆՒՆԵՍՔՕի ցանկին միացած է 1984ին). Ուալիտ Ա. Խալիֆան Այնճար քաղաքը հիմնած է 8րդ դարու սկիզբը: Այնճարի աւերակները կ'ապացուեն կանոնաւոր յատկագծու-

Պատրաստեց
Լ. ԿԻՒՂՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

ՊԷՏՔ Է ԽՈՒՍԱՓԻԼ ՏԱԳՆԱՊԻ...

Շարունակում՝ 5րդ էջին

րուն միջև յարաբերությունները վերջին տասնամակնյակին մեծապես դարձրեցին: Ան նշեց, թե այս օրերին մէջ մեծ դեր խաղացած է ամերիկացի զարգացման կազմակերպիչները, որ իր տարրերը կուսակցութիւններով եւ կազմակերպութիւններով յաջողած է հայ - ամերիկեան զարգացած եւ ընդլայնած յարաբերութիւններու յատկազօր զօծել: Ան յայտնեց, որ «այս յարաբերութիւնները կը շարունակուին միեւնոյն թափով եւ աւելի եւս կը զարգանան ընդհանրապէս, ըլլա՛յ ճամաշխարհաւանդ որ երկու երկրները յաջող գործընկերներ են եւ անոնց ընդհանուր նպատակները իրարու կը համապատասխանեն»: Ան իր շեշտը դրաւ օգնութեան ծրագրերներուն, եւ մասնաւոր գինուորական մարզին մէջ համագործակցող օգնութիւններուն վրայ,

որոնք վերջին տարուան ընթացքին բաւական ծաւալած են: Միւս կողմէ, «Մետիւս» լրատու գործակալութիւնը հաղորդեց, թէ Եւրոպայի մէջ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան անվտանգութեան եւ քաղաքական հարցերու գրասենեակին տնօրէնը՝ Ճոն Սմիթ խօսք առած է ԵԱՀԿ-ի Խորհուրդի նիստին ընթացքին եւ անդրադարձած է Հարաւային Կովկասի մէջ տիրող տագնապին: Սմիթ յայտնած է, թէ Միացեալ Նահանգներ պիտի շարունակեն բաժին վերցնել վրաց - արխազական, Հարաւային Օսեթիոյ կան, Հարաւային Ղարաբաղի տագնապներու համար խաղաղ լուծումներ գտնելու շախտանքին մէջ, եւ այդ մէջը՝ ԵԱՀԿ-ի եւ միջազգային շրջանակին կողմէ ընդունուած չափա-

նիշներուն հիման վրայ: Ան շեշտած է, թէ նշեալ հարցերուն քաղաքական լուծումները անպայմանօրէն պէտք է յարգեն տագնապին մաս կազմող երկրներուն տարածքային ամբողջականութիւնն ու

ինքնիշխանութիւնը, որ պէտք է կարելի ըլլայ խնդիրները մէկանգամ մընդմիջ լուծել երկկողմանի հիմքի վրայ:

ՕՐԱՏԵՏՐ


ՓԱՌԱՏՕՆ / ՅՈՒՅԱՀԱՆԳԼԷՍ / ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

ՊԷՅԹԵՏՏԻՆԻ ՓԱՌԱՏՕՆԸ ԻՐ ԱՍԱՌԸ ԿԸ ՍԿՍԻ ՄՕՐԻՍ ՊԷՏԱՐԻ ՆՈՐ ՊԱԼԷՈՎ

Այս շաբաթավերջին մեծ հանդիսաւորութեամբ իրենց բացումը կը կատարեն Լիբանանի եւ Միջին Արեւելքի մշակութային մեծագոյն փառասօները՝ Պալայէքի եւ Պէյթէտտինի միջազգային փառասօները, որոնք մեծ համբաւ վայելող արուեստագէտներ ու խումբեր կը հասցնեն լիբանանեան բեմեր: Դասական ճշգ, փոփ, արեւելեան եւ այլ երաժշտութիւններ պիտի հնչեն այս փառասօներուն ընթացքին, բայց նաեւ դասական պար, երաժշտաստն թատրոն, օփերա եւ նոյնիսկ լարախաղացներ պիտի ներկայանան հանդիսատեսներուն: Հակառակ իրաքի պատերազմին եւ շրջա-

Պէժարի մանուկներու պալէի նոր խումբն է: Պէյթէտտինի բեմին վրայ կը ներկայացուի «Քոմիսիոն Էմ»-ի առաջին ստեղծագործութիւնը՝ «Մէր Թերեզա է լէ Կ'անֆան տի Մոնտ» պալէն: Տրամալի, պարի եւ երգի խառնուրդ ձեռքով այս գործը աշխարհին կը փոխանցէ ընկերային եւ բարեսիրական պատգամներ: Այս պալէով հանդէս կու գան քսան պարողներ, որոնց արուեստը արծանացած է միջազգային քննադատներու գնահատանքին: Մայր Թերեզայի դերը պիտի կատարէ նշանաւոր պայելիս Մարսիա Հայտի:

ՕՊԵՐԵՒՈՅԹ



ՌԻՐԱԹ, 11 ՅՈՒՆԻՍ 2003 ՊԷՅՐՈՒԹ ՄԱՍԱՄԲ ԱՄՊՈՏ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՅԵՐԵԿ՝ 29°C ԳԻՇԵՐ՝ 22°C ԽՈՒՍԱՌԻԹԻՒՆ՝ 76%

ԱՅՍՕՐ

- Պէյթէտտինի փառասօն. «Մէր Թերեզա է լէ Կ'անֆան տի Մոնտ», պալէի ներկայացում, «Մօրիս Պէժար» պալէի խումբին կողմէ, ժամը 20:30ին, Պէյթէտտինի պալատ: - Սուրի փառասօն. Արաբական բանաստեղծութեան երեկոյ, ժամը 21:00ին, Սուրի հումեալեան ամփիթատրոն: - Նկարչական ցուցահանդէս՝ «Փամանակակից երիտասարդ արուեստագէտներ», «Նոսա՛ Գ Արք» ցուցասրահ, մինչեւ 25 Յուլիս: - Արկածախնդրական խաղերու փառասօն՝ «Էքսպրիմ Էտվենջըր փարք», Պիեղի մէջ, մինչեւ Օգոստոսի վերջը: - Թուրքիայի Միջազգային 4րդ փառասօն, բոնդիկներու ցուցահանդէս, ժամը 12:00ին «Լա վուայ պեթ»-ի մէջ, Ժայլէլ: - Ձեռնդման արուեստի գործերու ցուցահանդէս՝ Նատա Արհմաուլի «Աթազարաթ, Ֆրաքսիոն տը մեմուարը», մինչեւ 31 Յուլիս, Նահատակաց հրապարակ: - Մերսիսկան մշակութային շաբաթ, եՆՌԵՍԲՕ, մինչեւ 19 Յուլիս: - Կովկասեան գորգերու ցուցահանդէս, «Արքայ» բանագարան, մինչեւ 12 Յուլիս:

ԱԶԳԱԿ 50 ԵՆԵՐԻ ԵՆՈՒՆԹ 11 Յուլիս 1953

ԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԴԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԶԳԱՅՈՒՆՅ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՍԸ ԻԹԹԻՀԱՏԸ ԻՆԶՊԷՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՌԻ ԶԱՐԴԵՐԸ

Տարաբաղաճ կուսակալ տղք. Ռեշիտ պէյ ետ կանչուողներուն մէջ կը գտնուէր: Օր մը ընդհանուր կեդրոնին մէջ ինծի այցելելու եկած էր: Հանդիսաւոր շեշտով մը ըսի: - Դուք բժիշկ էք եւ իբրեւ բժիշկ՝ ձեր պարտականութիւնն է մարդ փրկել: Ի՞նչպէս եղաւ, որ այսքան անմեղներուն գունդ առ գունդ ձերբակալուելով մահուան գիրկը նետուելուն պատճառ եղաք: Տղք. Ռեշիտ ինծի սե պատասխանը տուաւ: - Բժիշկ ըլլալս ինծի չէր կրնար մտայնել տալ ուղղութիւն: Ռեշիտ բժիշկ մըն է, բայց իբրեւ բուրք մը աշխարհ եկած է: Հիմա այս դիտողութիւնը չէիք ընել, եթէ ինծի պէս մօտեն ուսումնասիրելու առիթ ունեցած ըլլայիք, թէ Տիարպէրիի հայերը ի՞նչ տեսակ խոստումներով եւ ձեռքի տակ ի՞նչպէս բռնաւորուելով բռնամական եւ լրտեսի ահարկու գազումներ կը սնուցանեն հանգիստ այս երկրին, ուր կ'ստիպուին բարօրութեան անքն: Արեւելքի հայերը մեզի դեմ այնպէս մը զրգոած էին, որ եթէ իրենց տեղը մնացած ըլլային, իրենց շրջանին մէջ մէկ հատիկ բուրք եւ իսլամ ողջ պիտի չզգէին: Ասոնց տուներուն մէջ կատարուած խուցարկութեան պատճառով բանակ մը օդը հանելու բաւարար քանակութեամբ ուղղութեանը ձեռք անցաւ: Տեսայ, որ սարսափազդու եւ ահարկու կազմակերպութիւն մը ունին: Եթէ երկրին մէկ կողմը տարածուած այս կազմակերպութիւնը եղածին պէս բոլորը, շատ չանցած Անտալուի մէջ մտնող պիտի փնտնենք բուրքը... Այսինքն կ'ամ անոնք մեզի, կ'ամ մենք գանձը... Երբ այս էր կացութիւնը, ես ինծի խորհեցայ: - Հէ՛յ տղք. Ռեշիտ, երկու հաւանականութիւն կայ. կ'ամ հայերը բուրքը պիտի մաքրեն, կ'ամ թէ բուրքերուն կողմէ պիտի մաքրագործուին... Այս երկրորտանքը ընելու անհրաժեշտութեան առջեւ երկար ատեն վարակեցայ: Թրքութիւնս յարգանակեց բժշկութեանն ու հիմ: Փոխանակ բոլոր տարու, որ անոնք մեզի բնաջնջեն, մենք զանոնք կը բնաջնջենք, ըսի: Տղք. Ռեշիտի հարցուցի: - Ձեր այս ընթացքին իբրեւ հետեւանք ձեր խիղճը չի տանջեր ձեզ:

Պատասխանեց. - Անտարակոյս. բայց այս գործը տեսայ ո՛չ անձնակազմ հպարտութեան գոհացում տալու, ո՛չ ալ քրպանս լեցրուելու համար: Եստայ, որ հայերն իբր ձեռք կ'ելլէ, իսկոյն աչքս գոց առաջ նետուեցայ՝ համոզուած, որ յօգուտ ազգիս կը շարժիմ: - Հապա պատմական պատասխանատու լնը: - Եթէ այս ընթացքին պատճառով մեր պատմութիւնը գիս պատասխանատու նկատու, այժմէն կ'ընդունիմ: Բայց ուրիշ ազգերու պատմութիւնը իմ մասիս ինչ որ ալ գրէ, փոյս չէ: Տղք. Ռեշիտ սապէս վերջ էր տուած խօսքերուն. - Բիշ առաջ ինծի հարցուցած էիր, որ իբրեւ բժիշկ մը ի՞նչպէս մարդ մեղսուցած եմ: Ահա պատասխանը. հայ յելուգները այս հայերն իբր ձեռք մէջ բռն զրաժ խառնալուստի մը վրասկար մանրէներ էին: Միթէ բժիշկին պարտականութիւնը չէ՞ մանրէները սպաննել: Այդ շրջանին անպակաս էին տղք. Ռեշիտի պէս խորհողները: Բայց երբ պատմութիւնը ստիպուեցաւ ձեռք պայմաններով զինդադար մը ստորագրել եւ յարակալան պետութեանց բանակները իսթանպուլ մտան, թէ լեզուները փոխուեցան եւ թէ համոզումները: (Բոլորը գիտեն, որ երբ տղք. Ռեշիտ հասկացաւ, թէ իբրեւ հայկական տարագրութեան է ջարդին գլխաւոր հեղինակներէն մին՝ ձեռքակալուելով պիտի սպաննուի, գանկին գնդակ մը պարպելով անձնասպան եղաւ): - Խօսքը վերջացնելու առաջ կ'ուզեմ կետի մըն ալ անդրադառնալ: - Այդ շրջանին հայ հայրենակիցներուն մեծագոյն ջարդը գործեցին կոմիտանիի մտայնութեամբ բրծնուած հայերը: Այս պատճառով բազմաթիւ անմեղ մարդոց արիւնը պարպալ տեղը հոսեցաւ: Անցեալ տարիներու այս դառն արկածախնդրութեան սա մեծագոյն դասը կարելի է քաղիլ, որ բուրք եւ հայ ազգերը հիմա հնարաւորութիւն գտած են լաւագոյնս սիրել գիրար:

ԱՅՍՕՐ 11 ՅՈՒՆԻՍԻՆ 1904- Գայլ Կահանի եւ Սիիրանի գլխաւորութեամբ տեղի կ'ունենան Մօսուհի եւ Զօրի կոնկերտը (Մօսուհի Զօրի արշաւանք):

«ԱԶԳԱԿ»Ի ՄԷՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»-ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուակ օր մը առաջ, ՄԻՆՁԵՒ ԵՐԵՎԱՆԻ ՓԱՄՐ 5:00: ՄԱՀԱԶԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԶՈՂՐԱՊ ԺՈՋԷՔ ՊԱՂՃԵԱՆԻ մահուան քառասունընկուորակ, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Յուլիս 2003, Էշրեֆիէի Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Ա. Աւետման եկեղեցու մէջ, առաւօտեան ժամը 10:00ին:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5484 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱԶԱՐԵԱՆ

Table with 10 columns and 10 rows for the crossword puzzle.

- ՏՈՒՐՈՒՆԱԿԱՆ 1. Մամուլի ցանց: 2. Նախաճաշիկ - Բաղադրուած: 3. Զայնանիշ - Համար: 4. Ազնուական ձիաւոր - Գոհար: 5. Երգեցիկ թուղուն: 6. Տարաւոր - «Չօրաւոր» խաղաթուղթ: 7. Հանճարանիչ - Տառի մը անունը: 8. Գեղեցիկ արթար - Եւրոպական մայրաքաղաք: 9. Անիս - Հաստ գաւազան: 10. Բանակ - Ապացոյց, արդարացում:



ՏԻՆԷ ԿՐԱՆԻ ԱՍՏԳԵՐԸ

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ) Եթէ նպատակ ունիք փոքր կամ մեծ նամբորդութիւն մը կատարելու, օրը շատ յարմար է: Պիտի գուարանանք, գոն պիտի վերադառնաք ձեր գացած տեղէն: ՅՈՒՆ (21 Ապրիլէն 21 Մայիս) Օրը նպատակ ունեցողները մարզի մէջ: Առանց անպարտաւոր պիտի կարենաք դասաւորել ձեր բոլոր խնդիրները: Ամսուան լաւ օրերէն մէկն է այս: ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս) Չուր տեղ բանավէ մը պիտի ունենաք անձի մը հետ՝ ձեր տեսակետը պարտադրելով անոր եւ համոզելու փորձով, թէ ձեր վարած կեանքը լաւագոյնն է: Բայց ի՞նչ իրաւունքով դուք ձեզ տիպար մը կը նկատէք: ԽՆՅԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս) Ձեր տրամադրութիւնը բարձր պիտի ըլլայ եւ ձեր շրջապատին հետ պիտի ունենաք հաղորդական յարաբերութիւն, ամբողջ օրուան ընթացքին: Իրիկունը տօնական մթնոլորտ պիտի տրի՛ ձեր շուրջը: ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս) Ամսուան ամէնէն օգտաշատ ու նպատակաւոր օրն է այս՝ սիրոյ եւ տեսակական մարգերու մէջ: Ուրեմն ձեր տան մէջ կ'ծկուած մի՞ մնաք: Դուրս ելէք գուարք: ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Ձեր տան մէջ ինչ որ աւելորդ կամ անգործածելի պիտոյրներ ունիք, դասաւորեցէք գանձը: Եթէ ունիք օգտագործելի հագուստներ կամ գրեթեակալ պիտոյք, գանձը նուիրեցէք բարեսիրական հիմնարկի մը: ԿՇԻՈՒԲ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) Այս երեկոյքը, որ պիտի կազմակերպէք, շատ յաջող պիտի անցնի: Հրաւիրեցէք ձեր բարեկամները, որոնք գոն պիտի մնան ձեր հիւրասիրութեանը: Եղէք սիրալիր: ԿՆՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) Եթէ պետական վճարումներ ունիք, ձեր պարտքը վճարեցէք օրը օրին, որպէսզի գումարները իրարու վրայ չդիպուին: Դուք չէք կրնար այդքան գումար մէկ անգամով յանձնելու: Ուրեմն եղէք պարտաճանաչ: ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Այսօր ձեր համայնք պիտի բարձրանայ ընկերութեան մէջ: Ամէն մարդ պիտի ուզէ ունենալ ձեր ընկերակցութիւնը, իսկ դուք պիտի շուարիք, թէ ո՛ր մէկը պիտի ընտրէք: ԱՅՅԵՆՂԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) Ով որ պիտի ուզէ ձեզ դժուարութեան մատնել այսօր, տակաւին չէ ծնած: Պիտի կարենաք պատասխան տալ ամէնուն: Ձեր տեսակետը պիտի ընդունուի: ԾՈՎԱՆՈՅԸ (21 Յունուարէն 19 Փետրուար) Կը բաւէ հեռուայնային զանգ մը, որպէսզի յանկարծ բարձրանայ ձեր տրամադրութիւնը: Այնքան պիտի ուրախանաք, որ սատանային հետ իսկ գործակցելու փափաք պիտի ունենաք: ԶՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) Եթէ տեղ մը դիմում կատարած էիք հարցի մը փոփոխութեան կամ վերանորոգման համար, պիտի սպասէք մինչեւ վերամուտ: Այս սպասումը ձեզ պիտի շղայնացնէ:

ԹԻՒ 5483 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

Table with 10 columns and 10 rows for the crossword puzzle.

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Բ Ն




Հ. Մ. Ը. Մ. ԿԸ ՇՆՈՐՀԱԲՈՐԷ ՕԼԻՄՓԻՔԸ

Հ. Մ. Ը. Մ. Ի Լիբանանի Շրջանային վարչությունը իր երկրորդ շնորհաուրագիրը լողեց Օլիմպիկի, որ Լիբանանի ախոյեան հանդիսանալ է բացի, շահեցավ նաև Լիբանանի բաժակը:

Շրջանային վարչությունը գովասանքով արտասայտուեցավ Օլիմպիկի այս իրագործումին համար, որովհետև Լիբանանի ֆուտբոլի պատմության մեջ ցարդ ոչ մէկ խումբ յաջողած էր Բ. դասակարգէն Ա. դասակարգ բարձրանալ եւ նոյն տարին տուպէ մը իրագործել:

Հ. Մ. Ը. Մ. Ի Լիբանանի Շրջանային վարչությունը նորանոր յաջողութիւններ մաղթեց Օլիմպիկի:

ՖԱՏԻԿԱ ՄԻԱՅԱԻ ԻՆԹԵՐԻ




Մենեկայի միջազգային միջնապահ Խալիլու Ֆատիկա երէկ լքելով իր ակումբը՝ Օքսֆորդ, միացավ Ինթեր Միլանի, փոխան՝ երեք միլիոն եւրոյի (3,5 միլիոն ամերիկեան տոլար):

28 տարեկան Ֆատիկա, որ 32 անգամ կրած է իր երկրին ֆուտբոլի ազգային խումբին շապիկը, կը կրէ նաև պեյճիքական անցագիր, նկատի ունենալով որ ան վեց տարի հոն մնացած է, ուր մաս կը կապմեր Ֆ. Բ. Պրիմի:

Ինթեր, որ շաբաթակիցքին իր կապմին միացուց արաբիցի Լուչիանոն (Քիեռլոյէն), այժմ աշխատանք կը տանի նաև Այաքս Ամսթերտամի միջնապահ Էնտի Վան Տեր Մէյտէի ստորագրութիւնը ձեռք ձգելու համար:

ՊՊԻՐԿՈՆՅ ԲԱՆՏԱՐԿՈՒԵՑԱԻ



Շրանայի ֆուտբոլի ֆետերասիոնի նախկին նախագահ Ժերար Պորկոնյ երէկ վեց ամսուան բանտարկութեան վճիռ ստացավ իր ընտանիքին պահ դրուած գումարը՝ աւելի քան 10 միլիոն եւրո, անմահական նպատակի համար ծախսած ըլլալու համար:

63 տարեկան Պորկոնյ նկատուեցավ յանցանոր այդ գումարը 1995էն 1999 մսխած ըլլալու համար:

ՓԻՆԿ ՓՈՆԿ

ԿՐՏԱԵՐՆԵՐՈՒ ԱՄԱՌՆԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՔ

Մոն Լա Սալի մէջ երէկ տեղի ունեցան Լիբանանի փինկ փոնկի ամառնային մրցաշարքին 90-91 ի եւ 88-89 ի ծնունդ դասակարգերու մրցումները:

Հ. Մ. Ը. Մ. Ի մարզիկները թէեւ յաւ ներկայացումներ կրցան կատարել, սակայն անոնք նախորդ օրուան նման չկրցան բաժակներու տիրանալ՝ երկու դասակարգերու մէջ ալ:

Դուին Մուշոյղեան (88-89 ծնունդ) թէեւ յաջողեցավ հասնիլ աւարտականին, սակայն պարտուեցավ Թալա Հաուիլային՝ 3-0 արդիւնքով:

Ստորեւ՝ երէկուան արդիւնքները.

90-91 ի ՇՆՈՒՆԳ

Հայկ Խաչերեան (Հ. Մ. Ը. Մ. Թրիփոլի) - Մոհամէտ Քէիէլ 0-2

Արամ Մանուէլեան (Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս) - Հէտի Համտոն 2-0

Արամ Մանուէլեան (Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս) - Նետիմ Լահուտ 1-2

Սահակ Բալեան (Հ. Մ. Ը. Մ. Թրիփոլի) - Նքուլա Պարթոս 2-0

Սահակ Բալեան (Հ. Մ. Ը. Մ. Թրիփոլի) - Մարիո Սալէ 0-2

88-89 ի ՇՆՈՒՆԳ

Մայք Փոլատեան (Հ. Մ. Ը. Մ. Թրիփոլի) - Սամիր Սալէ 0-2

Հրակ Մանուէլեան (Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս) - Ժորժ Իսաք 2-0


Հրակ Մանուէլեան (Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս) - Էլի Մաալոյ 1-2

Դուին Մուշոյղեան (Հ. Մ. Ը. Մ. Պէյրութ) - Քրիսթին Սալէ 3-0

Դուին Մուշոյղեան (Հ. Մ. Ը. Մ. Պէյրութ) - Լարա Սիլեան (Անդրանիկ) 3-0

Դուին Մուշոյղեան (Հ. Մ. Ը. Մ. Պէյրութ) - Թալա Հաուիլա 0-3 (Աւարտական)

ԹԻԵՐԻ ՀԱՆՐԻ «ԾԱՆՈՒ» ԶԷ



Արսենայի նախագահ Փիթըր Հիլ - Վուտ երէկ բրիտանական «Տէյլի Էքսպրէս» օրաթերթին հետ իր ունեցած մէկ հարցազրոյցին ընթացքին ըստ, որ նոյնիսկ եթէ իրեն 115 միլիոն ամերիկեան տոլարի առաջարկ մը ներկայանայ մտադիր չէ ծախել ֆրանսացի յառաջապահ Թիեթի Հանրին:

Այնպէս կը թուի, որ Հիլ - Վուտ իր խօսքը անուղղակիօրէն կ'ուղղէ Չէլսիի նոր սեփականատիրոջ ռուս միլիարտներ Բոման Ապրամովիչի, որ Չէլսիի մարզիչ Քլաուտիո Տանիերիի տրամադրութեան տակ դրած է 325 միլիոն ամերիկեան տոլար, լոնտոնեան կապմը օժտելու համար նոր մարզիկներով:

ՇԵՆՆԱՐՁԱՒ. ՖՐԱՆՍԱՅԻ ԶՐԶԱԿԱՅԸ


ՓԵԹԱՔԻԻ ԵՐՐՈՐԴ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Ֆրանսայի հեծելարշաւի շրջալաքի 5րդ հանգրուանի մրցումը, որ տեղի ունեցավ երէկ Թրուայէն Նեվէր (196,5 քմ.), վերջ գտավ Ֆասսա Պորթոլոյի իտալացի հեծելանորդ Ալեսանտրո Փեթաքիի յաղթանակով, որ այսպիսով հէթրիք մը իրագործեց, արձանագրելով՝ 4 ժամ 9 վայրկեան եւ 47 երկվայրկեան արդիւնք մը: Նախապէս ան շահեցավ առաջին եւ երրորդ հանգրուանի մրցումները:

Եւ. Լա. Փոսթալի քոլումպիացի հեծելանորդ Վիթթոր Հիլօ Փենա, որ երէկ կը տօնէր իր ծննդեան 29րդ տարեդարձը, պահեց դեղին շապիկը՝ մէկ երկվայրկեանի իր առաւելութիւնը պահելով ընդհանուր դասաւորման 2րդ դիրքը գրաւող իր իմբակիցին՝ ամերիկացի Լէսա Արմսթրոնկի վրայ: Փենա արձանագրած է 17 ժամ 54' եւ 31" արդիւնք մը:

Անոնց խումբը այժմ կը գրաւէ խումբերու ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը (56 ժամ 6' 45"), 49 երկվայրկեանի առաւելութիւն մը ունենալով ՕՆՍԷի վրայ:

Այսօր տեղի կ'ունենայ 6րդ հանգրուանի մրցումը, Նեվէրէն Լիոն (230 քմ.):



Փեթաքի

ՓԱՌԻԼԵԹԱ Փ. Ս. Ժ. Ի ՄԻԱՑԱԻ

Փարիկ Սէն Ժերմէնի պատասխանատուները երէկ յայտնեցին, թէ ամբողջացուցին փորձուագիցի յառաջապահ Փաուլեթայի փոխանցումը՝ Պորտոլոյէն, ըստ ոչ պաշտօնական տեղեկութիւններու անոր փոխանցումը ֆրանսական կապմին արժեք շուրջ ութ միլիոն եւրո:

30 տարեկան Փաուլեթայի Փարիկ Սէն Ժերմէն փոխանցումը ձեռնարկ մը ելքի ճամբայ բացու ակումբին մաս կապմող պրապիլիցի Ռոնալտինիոյի համար, նկատի ունենալով որ 23 տարեկան մարզիկով անէնէն աւելի շատ հետաքրքրուողները եւ իրարու հետ պայքար մղող ակումբներն են՝ Մանչեսթըր Եունայթըտ եւ Պարսելոնա:

Փարիկ Սէն Ժերմէնի նախագահ Յրենսի Կրէյի համաձայն, Պարսելոնայի առաջարկը աւելի նպաստուոր է, քան Մանչեսթըր Եունայթըտի նը:

Ռոնալտինիոն իր



Փաուլեթա՝ իր ճոր խումբին շապիկով

Ռոնալտինիոյի համար Մանչեսթըր պատրաստ է վճարելու 25 միլիոն եւրո, որ սակայն կրնայ բարձրանալ 35 միլիոն եւրոյի նայած, թէ պրապիլցին ինչպիսի արդիւնք պիտի արձանագրէ անգլիական կապմին հետ:

Նախագահ Կրէյսակայն ինքնամատահութեամբ կ'ըսէ, թէ կրնայ իր կապմէն ներս պահել Փաուլեթան եւ Ռոնալտինիոն, նկատի ունենալով, որ ակումբին բաժնետէրը՝ «Լանսալ Փիլիս» հեռատեսիլի ընկերութիւնը 20 միլիոն եւրոյի յաւելեալ օժանդակութիւն մը տրամադրած է ակումբին:

Սէն Ժերմէնի նոր մարզիչ՝ Վալիտ Հալիլիոն չէ կ'ըսէ, թէ Փաուլեթան կը փափաքէր իր կապմին միացումը եւ այդպէս ալ պատահեցավ: Սակայն ան շեշտեց, թէ փորձուագիցիին ժամանումը չի նշանակեր, թէ Ռոնալտինիոյ պիտի հեռանայ խումբէն: Ան կ'եզրափակէ ըսելով, որ եթէ անիս մը առաջ միացած ըլլար Սէն Ժերմէնի կը փորձէր համոզել Ռոնալտինիոն, որ չհեռանայ խումբէն:

Նշենք, թէ Փաուլեթա հանդիսացավ Ֆրանսայի 2002-2003 եղանակի կոլոսորդը՝ իր նշանակած 23 կոլով:

ՄՈՆՏԻԱԼ 2006

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԶՏՈՒՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՊԻՏԻ ՍԿՍԻՆ 6 ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ

Անցնող քանի մը օրերուն ընթացքին, ՖիՖԱն հրապարակեց 2006ի Մոնտիալի Հարաւային Ամերիկայի վտոււի մրցումներուն յայտագիրը: Չտոււի մրցումները պիտի սկսին այս տարի՝ յառաջիկայ 6 Սեպտեմբերին եւ կ'աւարտին 12 Հոկտեմբեր 2005ին:

Հարաւային Ամերիկայի ցամաքամասին մաս կը կապմեն Փերու, Փարակուէյ, Բոլիւմպիա, Պրագիլ, Էքուատոր, Վենեզուելլա, Ուրուկուէյ, Պոլիվիա, Արժանթին եւ Չիլի:

Ստորեւ՝ վտոււի այդ մրցումներուն յայտագիրը.

2003

+ Սեպտեմբեր 6-7. - Փերու - Փարակուէյ, Զոլումպիա - Պրագիլ, Էքուատոր - Վենեզուելլա, Ուրուկուէյ - Պոլիվիա եւ Արժանթին - Չիլի

+ Սեպտեմբեր 9-10. - Փարակուէյ - Ուրուկուէյ, Պրագիլ - Էքուատոր, Պոլիվիա - Զոլումպիա, Վենեզուելլա - Արժանթին եւ Չիլի - Փերու:

+ Նոյեմբեր 15-16. - Փարակուէյ - Էքուատոր, Ուրուկուէյ - Չիլի, Փերու - Պրագիլ, Արժանթին - Պոլիվիա եւ Զոլումպիա - Վենեզուելլա:

+ Նոյեմբեր 18-19. - Վենեզուելլա - Պոլիվիա, Պրագիլ - Ուրուկուէյ, Էքուատոր - Փերու, Չիլի - Փարակուէյ եւ Զոլումպիա - Արժանթին:

2004

+ Մարտ 30-31. - Ուրուկուէյ - Վենեզուելլա, Փարակուէյ - Պրագիլ, Պոլիվիա - Չիլի, Արժանթին - Էքուատոր եւ Փերու - Զոլումպիա:

+ Յունիս 1-2. - Էքուատոր - Զոլումպիա, Վենեզուելլա - Չիլի, Ուրուկուէյ - Փերու, Պրագիլ - Արժանթին եւ Պոլիվիա - Փարակուէյ

+ Յունիս 4-5. - Չիլի - Պրագիլ, Զոլումպիա - Ուրուկուէյ, Էքուատոր - Պոլիվիա, Արժանթին - Ուրուկուէյ, Էքուատոր - Պոլիվիա:

Փարակուէյ եւ Փերու - Վենեզուելլա:

+ Սեպտեմբեր 4-5. - Փարակուէյ - Վենեզուելլա, Չիլի - Զոլումպիա, Ուրուկուէյ - Էքուատոր, Փերու - Արժանթին եւ Պրագիլ - Պոլիվիա:

+ Հոկտեմբեր 9-10. - Զոլումպիա - Փարակուէյ, Պոլիվիա - Փերու, Էքուատոր - Չիլի, Վենեզուելլա - Պրագիլ եւ Արժանթին - Ուրուկուէյ:

+ Հոկտեմբեր 12-13. - Փարակուէյ - Փերու, Պրագիլ - Զոլումպիա, Պոլիվիա - Ուրուկուէյ, Վենեզուելլա - Էքուատոր եւ Չիլի - Արժանթին:

+ Նոյեմբեր 16-17. - Էքուատոր - Պրագիլ, Արժանթին - Վենեզուելլա, Փերու - Չիլի, Ուրուկուէյ - Փարակուէյ եւ Զոլումպիա - Պոլիվիա:

2005

+ Մարտ 26-27. - Էքուատոր - Փարակուէյ, Վենեզուելլա - Զոլումպիա, Չիլի - Ուրուկուէյ, Պոլիվիա - Արժանթին եւ Պրագիլ - Փերու:

+ Մարտ 29-30. - Փարակուէյ - Չիլի, Փերու - Էքուատոր, Պոլիվիա - Վենեզուելլա, Ուրուկուէյ - Պրագիլ եւ Արժանթին - Զոլումպիա:

+ Յունիս 4-5. - Վենեզուելլա - Ուրուկուէյ, Չիլի - Պոլիվիա, Էքուատոր - Արժանթին, Զոլումպիա - Փերու եւ Պրագիլ - Փարակուէյ:

+ Յունիս 7-8. - Չիլի - Վենեզուելլա, Փերու - Ուրուկուէյ, Փարակուէյ - Պոլիվիա, Զոլումպիա - Էքուատոր եւ Արժանթին - Պրագիլ:

+ Սեպտեմբեր 7-8. - Ուրուկուէյ - Զոլումպիա, Պրագիլ - Չիլի, Պոլիվիա - Էքուատոր, Փարակուէյ - Արժանթին եւ Վենեզուելլա:

+ Հոկտեմբեր 8-9. - Արժանթին - Փերու, Պոլիվիա - Պրագիլ, Էքուատոր - Ուրուկուէյ, Զոլումպիա - Չիլի եւ Վենեզուելլա - Փարակուէյ:

+ Հոկտեմբեր 11-12. - Ուրուկուէյ - Արժանթին, Պրագիլ - Վենեզուելլա, Փարակուէյ - Զոլումպիա, Չիլի - Էքուատոր եւ Փերու - Պոլիվիա:

ՊԱԹԻՍԹՈՒԹԱ ՄԵԾԱՐՈՒԵՑԱԻ

Արժանթինի ֆուտբոլի ֆետերասիոնը, որ ֆուտբոլի բարեկամական մրցումը մը ընթացքին տօնեց Մոնտիալի բաժակը շահելու իր 25րդ տարեդարձը, յատուկ կերպով մեծարեց նաև երկրին ֆուտբոլի մեծագոյն մարզիկներէն՝ Կարիէլ Պարիսիոն, որ Ռիվըր Փլէյթի (Պուէնոս Այրէս) դաշտին վրայ հրաժեշտ տուաւ Արժանթինի ֆուտբոլի ազգային խումբին համակիրներուն:

Երեք մոնտիալներու մասնակցած (1994, 1998 եւ 2002), սակայն քառորդ աւարտականէն անդին չկարողացած անցնիլ 34 տարեկան Պարիկոյ, 78 միջազգային մրցումներու ընթացքին նշանակած է 57 կոլ:

2002ի Մոնտիալէն ետք միջազգային ասպարէզը լքած Պարիսիոն ըստ, որ թէեւ իրեն համար ազգային խումբին դրները միշտ բաց են, սակայն իր իսկ կարծիքով, ան դժուար թէ այլեւս կրէ անոր շապիկը:



Արժանթինի ֆուտբոլի ֆետերասիոնի Գաբրիէլ Պարիսիոնը կը պատուէ Պարիսիոնը

ԿՈՒՉՈՒԻ

ՕՒՅԵԱԳԳԱԿԻՆ ԸՆԿԵՐՈՒՄԻՆ մը կարիք ունի. «Մարթեթորի, Էսվորթայզորի, Ռիթորթորի, եւ սեւեթի, լիւսամ կամ կիսամամ աշխատելու համար. ինքնուրուի կամ հեռաձայնի վրայ: Դիմել հեռ.՝ 03-432615 թիւին:

ՎԱՐՉՈՒ ԽԱՆՈՒԹ (ՏԱՍԱՆՈՎ)

Պուրճ Կանուտ, Ա. Վարդանանց եկեղեցույ ոհմաց, 2 փեղկով, 100 մետր տարածութեամբ: Դիմել հեռ.՝ 03-313618 եւ 01-586495:

ԻՐԱՆԻ ՄԵԶ ԴԱՐՉԵԱԼ ՄԵԾ ԴՍԻԱՔ ՍԸ

Իրանի մէջ տասնեակ հազարաւոր մարդիկ մարտահրաւեր ուղղած են՝ մեծ թիւով ոստիկաններու ներկայութեան, իրենց ինքնաշարժներով հաւաքուելով Թեհրանի համալսարանին շրջակայ գօտիին մէջ, ի նպատակով ժողովրդավարութեան ուսանողական արիւնալի խոռվութիւններու չորրորդ տարեդարձը նշելու համար:

Ոստիկանութիւնը սակայն կրցած է առնուապէս նոր բախումներ կանխարգիլել:

Հիշանորթիւնները համալսարանը փակած են նախապէս կանխարգիլելու համար վարչակարգին դէմ հրապարակաւ վայրոյթի արտայայտութիւններ:

Հակառակ մեծ թիւով ցուցարարներու, ոստիկաններու եւ իսլամական ծայրայեղական «պահակներու» ներկայութեան, միայն կարճատեւ բախում մը արձանագրուած է, թէ է, ըստ պահանջատեսներու, քանի մը երիտասարդներ ձերբակալուած են ոստիկաններու կողմէ:

Իրանեան «Պայթսայ» լրատու կայքին համաձայն, Թեհրանի մէջ 58 հոգի ձերբակալուած է: Անիկա նաեւ հաղորդած է, որ արեւելեան Թեհրանի Փարս աղքատ թաղամասին մէջ էլ կարգ մը նահանգներու մէջ էւս փոքր հաւաքներ տեղի ունեցած են: Պետական լրատու աղբիւրները անոնց մասին չեն խօսած:

Յուլի 9, 1999ին մեծ բախումներ արձանագրուած էին ուսանողներու եւ ոստիկաններու միջեւ: Առնուապէս մէկ ցուցարար սպանուած էր եւ հարիւրաւոր ուրիշներ ձերբակալուած կամ վիրաւորուած:

● ՌԻՍԻՆԿԿԱԹԵՆԻ ՄԵԶ, իրանեան ծագումով հարիւրաւոր ամերիկացիներ հաւաքուած են Չորեքշաբթի օր Բէիթրոյլ Հոյի վրայ խոռվութիւններուն չորրորդ տարեդարձին առիթով:

Անոնք երկրին վանապահ կողմերէն եկած էին եւ հաւաքուած Քոնկրէսին առջեւ, որ Թեհրանի վարչակարգին դէմ արտայայտութիւններ բացագանչած էին:

(ԱՅՓ)

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԵՒ ՀԻՄՆՈՒՄԱՅԻՆ ՔՈՐԷԱՅԻ ՄԻԶԵՒ ԼԱՐՈՒԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱՄԵՆԱՅ, ՀԱԿԱՌԱԿ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

ՄԵՌԻԼ, 10 (ԱՅՓ). - Հարաւային Քորէա Հինգշաբթի օր միջբրնձակաւ բարձրաստիճան բնակցութիւններ գործածած է՝ ճնշում բանեցնելու համար Հիւսիսային Քորէայի վրայ, որ ընդունի բազմակողմանի քննարկումներ, լուծելու համար կորիւպային խորացող տագնապը:

Հիւսիսային Քորէայի պատուիրակութեան նախագահը բանակցութիւններուն բացումը կատարած է գոյշացնելով ներկաները կորիւպային բախումը մը «մութ ամպերէն», եւ յայտնած է, թէ Փիոնկեանկ խաղաղութիւն կ'ուզէ, սակայն պատերազմէն խոյս պիտի չտայ:

Հարաւային Քորէա շեշտած է, թէ բազմակողմանի բանակցութիւններու կայացումը կարեւոր է:

Հիւսիսային քորէացիք ընդգծած են, թէ Ուաշինկթըն - Փիոնկեանկ բանակցութիւններ կ'ուզեն, սակայն անլուծուած են, որ բազմակողմանի բանակցութիւններ կրնան խոչընդոտ չհանդիսանալ, եթէ Մ. Նահանգներ հրաժարին «թշնամական» իրենց քաղաքականութենէն:

Կորիւպային տագնապը ծայր տուած էր անցեալ տարուան Հոկտեմբերին, երբ Մ. Նահանգներ բացայայտած էին, թէ Հիւսիսային Քորէա խոտովուած է, որ կորիւպային պետքերը կը մշակէ՝ բռնաբարելով 1994ի մէկ համաձայնագիրը, որ առեցնուած էր անոր կորիւպային ուժանիւթի կեդրոնները՝ տնտեսական օժանդակութեան եւ այլ շահերու փոխարէն:

ՊԻԵԼՈՌՈՒՄԻԱ

ԼՈՒՔԱՇԵՆԸՍ ՊԱՇՏՈՆԱԶՐԿԵՑ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՒ ԲԱՐՉՐԱՍՏԻԾԱՆ ԱՅՆ ՊԱՇՏՈՆԱՍԱՐՆԵՐ

ՄԻՆԱՔ, 10 (ԱՅՓ).- Պիւլոնոսիոյ նախագահ Ալեքսանտր Լուքաշենքո Հինգշաբթի օր պաշտօնակազմած է վարչապետը եւ բարձրաստիճան այլ պաշտօնատարները, զանոնք այսպէսով երկրին մէջ տիրող հարցերուն համար:

Վարչապետը՝ Կենտրի Նովիգըր, ամօժանարար փոխարինուած է առջին փոխ վարչապետ Սերգեյ Սիտոսըքի կողմէ:

Պիւլոնոսիա, Խորհրդային Միութեան քայքայումէն ի վեր հետզհետէ աւելի մեկուսացած է՝ Լուքաշենքոյի իշխանութեան ներքեւ, նոյնիսկ իր գլխաւոր դաշնակիցն էր Ռուսիոյ կողմէ: Իսկ անոր պնդումը, թէ կ'ուզէ ընկերավարական բնոյթի տնտեսութիւնը պահպանել, երկիրը դէպի ետ կը տանի:

Պաշտօնատարներու համաձայն, Լուքաշենքո իր խմբակը պաշտօնակազմած է, որովհետեւ անիկ չէ յաջողած նախագահին իրահանգները գործողիլ՝ «պաշտպանելու ժողովուրդին բարորութիւնը կամ երկրագործութեան մարդի աշխատանքները վարձատրել»:

Օր մը առաջ, կառավարութիւնը փակած էր ամերիկեան բարեփրական խմբակի մը գրասենեակները: Խմբակին նպատակն էր տեղական անկախ լրատու աղբիւրներուն զօրավիճակն ապահովել:

Վերջերս, Մինսքի իշխանութիւնները փակած են նաեւ անկախ 4 թերթեր եւ արգիլած են ոչ կառավարական 4 կազմակերպութիւններու գործունեութիւնը:

ԻՐԱՔԻ ՏԱՐԱԾԲԻՆ ԱՆԸՆԴՄԵՉ ԿՐ ԸԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ՉԻՆՈՒՐՆԵՐՈՒՆ ԴԵՄ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Ամերիկացի երկու պիւնտրներ սպաննուեցան Իրաքի մէջ Չորեքշաբթիէն Հինգշաբթի լուսոցոյ գիշերուան ընթացքին: Զինուորներուն սպանութիւնը կը հաստատուի, որ դաշնակից զրաւող ուժերուն դէմ ընդդիմութիւնը թափ կը ստանայ եւ թէ պայն հակակշիռի տակ առնելու յոյսերը կը նսեմանան:

Ամերիկացի պիւնտր մը սպաննուեցաւ Մահմուտիայի մէջ, Պաղտատի հարաւ, երբ խումը մը պիւնեալ պաշարեցին ու կրակ բացին ամերիկացի պիւնտրներու կարասանի մը վրայ: Միջադէպը տեղի ունեցած է առաւօտեան կանուխ ժամերուն: Երկրորդ պիւնտրը ինկալ Սատտամ Հիւսէյնի ծննդավայր Քիրքուքի մէջ, Պաղտատէն 175 քմ. հիւսիս, երբ ձեռնառումներ արձակուեցան խումը մը պիւնտրներու վրայ: Ամերիկացի բանբեր մը ըսաւ, որ նոյն միջադէպին երկրորդ պիւնտր մըն ալ վիրաւորուած է:

Նորագոյն միջադէպերով՝ Իրաքի մէջ 1 Մայիսէն ի վեր սպաննուած ամերիկացի պիւնտրներուն թիւը կը բարձրանայ 31ի: Պաղտատէն դէպի արեւմուտք Ռամատիի մէջ ալ փամփուշտ եւ ձեռնառումներ արձակուած են ամերիկացի պիւնտրներուն դէմ, սակայն պահեր ու վիրաւորներ չեն արձանագրուած: Ականատեսներ ըսին, որ Ֆայլուժայի մէջ ալ յարձակումի ենթարկուած է ամերիկեան պիւնտրական կեդրոն մը: Ամերիկեան աղբիւրներ չհաստատեցին Ֆայլուժայի գործողութեան լուրը:

Ամերիկեան ուժերուն դէմ յարձակումները կը բարձրացնեն դաշնակից ուժերուն ծախսերը Իրաքի մէջ: Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնրլոտ Ռամսֆելտը ըսաւ, որ Իրաքի մէջ ամերիկեան ուժերուն ներկայութիւնը ամսական 3,9 միլիարտ տոյլար կ'արժէ: ԱՖղանիստանի մէջ անոնց ներկայութիւնը ամսական 950 միլիոն տոյլար է: Իրաքի մէջ, Ուաշինկթըն օրակապ 130 միլիոն տոյլարի կարիքը ունի: Ռամսֆելտը ղիտել տուաւ, որ այս պարտատիրութիւնները բարեկան ծանր են Ուաշինկթընի համար, որ կարիքը ունի դաշնակիցներու օժանդակութեան:

Ան աւելցուց, որ 19 երկիրներ գետնի վրայ են եւ կ'օժանդակեն, սակայն ուրիշներ ալ պէտք է յանձնառութիւն յայտնեն՝ բազմազգեան մեծ ուժ մը հաստատելու Իրաքի մէջ Սեպտեմբերէն սկսեալ: Ռամսֆելտը կ'ակնարկէր երրորդական կարգ մը երկիրներու, որոնք պատերազմին դէմ էին, ինչպէս Ֆրանսա եւ Գերմանիա: Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Տոմիլիք Տը Վիլիէն յայտարարած էր, որ Փարիզ պատրաստ է մաս կազմելու բազմազգեան ուժի մը, պայմանաւ սակայն որ անիկա ՄԱԿի հովանաւորութիւնը վայելէ:

Ուաշինկթըն կը յուսայ, որ բազմազգեան ուժի մը ներկայութիւնը պիտի նուազեցնէ ամերիկեան ուժերուն դէմ յարձակումները: Իր խօսքին մէջ, Ռամսֆելտը ըսաւ, որ Իրաքի դէմ պատերազմին պատճառը հաւաքական քանդումի պէնթերո գոյութեան մասին փաստերու յայտնաբերումը չէր, այլ՝ գոյութիւն ունեցող փաստերը տարբեր անկիւնի մը դիտելն էր: Մինչեւ Ռամսֆելտի այս նոր յայտարարութիւնը, Ուաշինկթըն եւ Լոնտոն կը պնդէին, որ հաւաքական քանդումի պէնթերոն եւ անոնց սպառնալիքին մասին իրենց ունեցած փաստերը հրամայական դարձուցած էին պատերազմի որոշումը:

«Պ. Պ. Մ.» կայանը բրիտանացի պաշտօնատարներ մէջբերելով կը յայտնէ, թէ Իրաքի հաւաքական քանդումի պէնթերո գտնելու յոյսերը մարտնչուած են: Ըստ ռատիոկայանին, կառավարութեան պաշտօնատարներ համոզուած են, որ ենթադրաբար գոյութիւն ունեցող պէնթերո կարելի պիտի չըլլայ յայտնաբերել: Վարչապետ Ռոնի Պլէր սկսեցին համակրածիք չէ, որովհետեւ ան կը հաւատայ եւ կը փորձէ հանրութիւնը համոզել, թէ պէնթերո գոյութիւն ունին եւ ուշ կամ կանուխ պիտի գտնուին:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ խոստովանեցաւ, որ իր կառավարութիւնը արաւոքական դժուարութիւններու կը բարի Իրաքի մէջ: Ան շեշտեց, որ ամերիկեան ուժերը խիստ միջոցառումներով պիտի հակադարձեն ամերիկացի պիւնտրներուն դէմ յարձակումները գործողներուն: Պուշ աւելցուց, որ երբ իրաքցիները մաս կը կազմեն փոխանցման հանգրուանի կառավարութեան, անոնք պիտի գիտակցին, որ ամերիկեան ուժերուն դէմ գործողները Սատտամի մնացորդներն են:

● ԻՐԱԶՅԻ ՆԱԿԻԼԻՆ ՈՍՏԻԿԱՆՆԵՐ ԵՒ ՎԻՍՈՒՐԱԿԱՆՆԵՐ ԲՈՂՈՒՍԻՆ ԵՆԱՆՎԵՐ ԱՍԵՐԻԿԱՅԻ ՄԵՆ: Անոնք կը պահանջէին, որ քաղաքին ապահովութեան հսկողութիւնը իրենց յանձնուի:

ՕԹԱՆ ԿԵՆՍԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՌԻՆԻ ՕՏԱՆԴԱԿԵԼՈՒ ԿԵՂԻՐՆԱԿԱՆ ԱՍՏԻՈՅ

Կ'ԸՍԵ ՃՈՐՃ ԱՌՊԸՐԹՍԸՆ

ԱՄՄՍԹԻ, 10 (ԱՅՓ).- ՕՕԱՆ կենսական դերակատարութիւն ունի օժանդակելու Կեդրոնական Ասիոյ, որ ԱՖղանիստանի անկայունութեան պատճառով ստեղծուած մարտահրաւերներուն դէմ զին, յայտնած է ՕՕԱՆ ընդհանուր քարտուղար Ճորձ Ռոպերթսընը՝ Ղապախուստի մէջ, Հինգշաբթի օր: «Ուաշինկթընի եւ Նիւ Եորքի մէջ 2001ի յարձակումները ծրարուած է կազմակերպուած են Կեդրոնական Ասիոյ մէջ, ԱՖղանիստան: Հետեւաբար պէտք է միասնաբար ճակատ կազմենք ահաբեկիչներուն դէմ», ըսած է Ռոպերթսընը, տեսակցութիւն մը ունենալէ ետք Ղապախուստի նախագահ Նուրուլլայի Նապարպաբեկի հետ:

Մինչ օՕԱՆ կը պատրաստուի ԱՖղանիստանի մայրաքաղաք Քապուլի մէջ միջազգային ուժերուն ղեկավարութիւնը ստանձնել (անիկա Եւրոպայէն դուրս պիտիակցութեան առաջին հաստատումը պիտի ըլլայ), Կեդրոնական Ասիոյ երկիրները պէտք է բաժնեն պիւնտրութեան նոր մօտեցումը, ըսած է Ռոպերթսընը:

Ան շարունակած է ըսելով, որ «եթէ նոր աշխարհին մէջ ապահովութիւն պիտի ըլլայ, ապա պէտք է պիւնտրական աւելի մեծ գործակցութիւն ունենանք»: Ռոպերթսընը թղթակիցներու բացատրած է, թէ ահարժեշտ է աւելի լուսամարդուած ուժեր ունենալ, ջնջել Պաղ Պատերազմի օրերու պէնթերոն ու սարքերը եւ պանոսք փոխարինել նոր, աւելի ճշգրիտ եւ արդիական պէնթերով:

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՅԱՏԿԱՊԵՍ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՄՈՍԿՈՒՄ ԱՀԱՔԵԿՉԱԿԱՆ ԱՐԱՔՆԵՐՈՒ ՎԱԽՈՎ Կ'ԱՊՐԻՆ

Ռուսիոյ մայրաքաղաքը ահաբեկչութեան առնչուող հետզհետէ աւելի թափ ստացող մտավախութիւններ կը դիմագրայէ: Արդարեւ, երկկ, չեչէն կին մը փորձած է Մոսկուայի մէջ ճաշարան մը պայթեցնել, «ռոք» երաժշտութեան փառատօնի մը ընթացքին տեղի ունեցած անձնասպանական գործողութիւններէ քանի մը օր ետք:

Թէ է երկկուան յարձակումը չէ յաջողած, սակայն ական չէ պոքացնելու մասնագէտ մը մահացած է՝ պայթուցիկ սարքը քակել փորձելու ընթացքին: Անիկա կը պարունակէր 400 կրամ թի. Էն. Թի.ի համապատասխանող նիւթեր, ըստ ոստիկանութեան:

Ոստիկանութիւնը բացայայտած է, թէ ստացած է գաղտնի տեղեկութիւններ, ըստ որոնց՝ չեչէն «ոմքահար»ներու խմբակ մը կը պատրաստուի Մոսկուայի մէջ Յուլիսի կէսերուն շաբթ մը յարձակումներու ձեռնարկել:

Ներքին գործոց նախարարութեան գլխաւոր բանբեր Եուրի Շուվալով յայտնած է, թէ «ռոք» երաժշտութեան փառատօնին անձնասպանական գործողութիւնը, որ 14 կոխ խաձ էր, եւ երկկուան անձնասպանական գործողութեան փորձը կրնան մաս կազմել անոնց:

Ճաշարանին հսկող պահակներ կէս գիշերէն քիչ առաջ նկատած են, թէ կին մը իր պայուսակը դրած է մուտքին մօտ: Ան անմիջապէս ձերբակալուած է եւ ոստիկանութիւնը շրջանը պաշարած ու ականներ չէ պոքացնող մասնագէտներ կանչած է, ըստ ճաշարանին պատասխանատուին:

Ոստիկանութիւնը սակայն այլ բացատրութիւն տուած է, ըսելով, թէ կինը փորձած է մտնել ճաշարան, որ կրեմլինէն շուրջ 3 քմ. հեռաւորութեան կը գտնուի:

Սակայն ապահովութեան հսկող պահակներ պայն կասեցուցած են, կասկածելի պայուսակը տեսնելէ ետք:

«Ինթերֆաքս» լրատու գործակալութեան համաձայն, 22 տարեկան կնոջ ամուսինը Չեչէնիոյ պատերազմին սպանուած է:

ԵՐՈՂՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴԸ ՌՈՒՍԻԱՆ Կ'ԱՄՔԱՍՆԱԼԵ

Հրապարակաւ բողոք արտայայտելու իրաւունքը հապուղեպօրէն օգտագործող եւրոպական խորհուրդին մէկ յանձնախումբը երկկ Ռուսիան անբաստանած է Չեչէնիոյ մէջ վայրագ արարքները շարունակելու եւ կացութեան դարման չբերելու յանցանքներով:

Չարչարաններու դէմ պայքարող յանձնախումբը յայտնած է, որ Չեչէնիա քանի մը այցելութիւններու ընթացքին, տարբեր վայրերու մէջ իրարմէ անջատ կերպով հարցաքննուած մեծ թիւով անձեր յայտնած են, թէ շատ ծանր եւ վայրագ վերաբերմունքի ենթարկուած են ապահովութեան ուժերու կողմէ ձերբակալուելէ ետք:

Անիկա շեշտած է, որ բացատրութիւնները մանրամասնօրէն տրուած են՝ իրարու համապատասխանող ձեւով եւ թէ անոնք կը վերաբերեն միջոցներու, ինչպէս՝ ծանր ծեծ, էլեկտրական ցնցումներ եւ շնչափակող ընթացքներ:

Յանձնախումբը ըսած է, թէ բժիշկներու իր խմբակը հաստատած է ֆիլիքքական նշանները եւ պայմանները, որոնք կը փաստեն անձերուն անբաստանութիւնները:

Երկու տարուան ընթացքին երկրորդ անգամ ըլլալով էր, որ յանձնախումբը հրապարակաւ Ռուսիան կ'անբաստանէր Չեչէնիոյ գծով:

(ԱՅՓ)

ԹՈՒՐԵԻՍ

ՔԻՒՐՏ ԵՐԳԻՉ ՍԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐՈՒՄԻ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԵ

ՊՈԼԻՍ, 10 (ԱՅՓ).- Քիւրտ երգիչ մը, որ արեւելեան Թուրքիոյ մէջ տեղի ունեցած համերգի մը քիւրտ ըմբոստներուն ընդհանուր ներումի կոչ ըրած է, ձերբակալուած է եւ անջատողական քարոզչութեամբ անբաստանուած, յայտնած է անոր փաստաբանը:

Յերիաթ Թուրքիոյ ձերբակալութիւնը դարձեալ թափ պիտի տայ Թուրքիոյ մէջ խօսքի ապստոսութեան առնչուող բանավէճերու:

Ան ձերբակալուած է Երեքշաբթի օր, դատախապներու կողմէ անոր դէմ ուղղուած անբաստանութիւններէ ետք: Ան համերգը տուած է 10 օր առաջ:

Կառավարութիւնը վերջերս առաջարկած է անձնատուր եղող ՔԱԿի անդամներու ներում շնորհել կամ նուազեցնել արգելափակման ժամանակամիջոցը, պայմանաւ որ անոնք գործակցին իշխանութիւններուն հետ:

Քրտական ՏԵՎՊ կուսակցութիւնը մէկ միլիոն ստորագրութիւն հաւաքած է՝ ըմբոստներուն ուղղակի ներում շնորհելու առաջարկ դնելով: